

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԵՐԿՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Կառավարությունները (այնուհետ՝ Կողմեր),

ղեկավարվելով 1994 թվականի ապրիլի 15-ի Ազատ առևտրի գոտու ստեղծման մասին Համաձայնագրով և 1995 թվականի նոյեմբերի 3-ի Անկախ Պետությունների Համագործակցության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի մասին Համաձայնագրով, հաշվի առնելով ազատ առևտրի գոտու պատշաճ և արդյունավետ գործելու անհրաժեշտությունը, ապրանքների ազատ տեղաշարժման պայմանների ձևավորման նպատակներով, ձգտելով սահմանել ապրանքների ծագման երկրի որոշման միասնական կարգ,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը սակագնային և ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման նպատակներով ընդունում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող՝ ապրանքների ծագման երկրի որոշման Կանոններ:

Հոդված 2

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը և ձևակերպվում են արձանագրություններով՝ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ մտնող:

Հոդված 3

Կողմերի միջև վիճահարույց հարցերը, որոնք առաջանում են սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման ժամանակ, լուծվում են Կողմերի միջև խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 4

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի ուժի մեջ մտնելու համար բոլոր անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահի ստանալու օրվանից 30 /երեսուն/ օր հետո:

Ներպետական ընթացակարգերը ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերը ավանդապահի ստանալու օրվանից 30 /երեսուն/ օր հետո:

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դրա մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին: Այդ դեպքում սույն Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը տվյալ Կողմի նկատմամբ այդպիսի ծանուցում ավանդապահի ստանալու օրվանից վեց ամիս հետո:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո բաց է միանալու համար Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից ցանկացած պետության համար, ավանդապահին միացման մասին փաստաթղթերի փոխանցման միջոցով:

Միացող Կողմերի համար սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթղթերը ավանդապահի ստանալու օրվանից 30 /երեսուն/ օր հետո:

Կատարված է Յալթա քաղաքում 2009 թվականի նոյեմբերի 20-ին մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր Կոմիտեում, որը կուղարկի դրա հաստատված պատճենը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը:

Ադրբեջանի Հանրապետության
Կառավարության անունից

Ռուսաստանի Դաշնության
Կառավարության անունից

Հայաստանի Հանրապետության
Կառավարության անունից

Տաջիկստանի Հանրապետության
Կառավարության անունից

Բելառուսի Հանրապետության
Կառավարության անունից

Ուկրաինայի Կառավարության
անունից (վերապահումով)

Ղազախստանի Հանրապետության

Կառավարության անունից
(վերապահունով)

Ղրղզստանի Հանրապետության
Կառավարության անունից
(վերապահունով)

Մոլդովայի Հանրապետության
Կառավարության անունից

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Ապրանքների ծագման երկրի որոշման

Սույն ապրանքների ծագման երկրի որոշման Կանոնները (այնուհետ՝ Կանոններ) գործում են այն ապրանքների հանդեպ, որոնք ծագում են 2009 թվականի նոյեմբերի 20-ին Անկախ Պետությունների Համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման Կանոնների մասին Համաձայնագրի մասնակից պետություններից (այնուհետ՝ Համաձայնագրի անդամ պետություններ) և գտնվում են այդ պետությունների միջև ապրանքաշրջանառության մեջ, որոնց նկատմամբ կիրառվում է 1994 թվականի ապրիլի 15-ի Ազատ առևտրի գոտու ստեղծման մասին Համաձայնագրով նախատեսված առևտրային ռեժիմը:

Երրորդ երկրներից Համաձայնագրի մասնակից պետությունների մաքսային տարածք ներմուծվող և այդ պետություններից երրորդ երկրներ արտահանվող ապրանքների ծագման երկրի որոշման կանոնը կանոնակարգվում է Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով:

Բաժին 1

Տերմիններ և հասկացություններ

Սույն կանոնների նպատակների համար օգտագործվում են հետևյալ տերմինները և հասկացությունները.

ապրանքի ծագման երկիր – երկիր, որտեղ ապրանքը ամբողջությամբ արտադրված է կամ ենթարկված է

բավարար մշակման/վերամշակման` սույն կանոններին համապատասխան,

բավարար մշակման/վերամշակման չափորոշիչ – ապրանքների ծագման երկրի որոշման չափորոշիչներից մեկը, որի համաձայն ապրանքը, եթե դրա արտադրությանը մասնակցում են երկու կամ ավելի երկիր, համարվում է այն երկրից ծագած, որի տարածքում ենթարկվել է վերջին էական մշակման/վերամշակման, որը բավարար է ապրանքին իր բնորոշ հատկանիշները վերագրելու համար,

կուտակային սկզբունք - ապրանքների ծագման երկրի որոշման սկզբունք, որի համաձայն ապրանքի ծագումը որոշվում է Համաձայնագրի մասնակից պետություններում ապրանքի հաջորդաբար մշակման/վերամշակման արդյունքում վերջնական ապրանքի պատրաստման երկրով,

պատրաստում/արտադրություն – ցանկացած տեսակի արտադրական և տեխնոլոգիական գործողությունների կատարում` ներառյալ հավաքում կամ որևէ հատուկ գործողություններ, որի նպատակն է հանդիսանում արտադրանքի ստացումը,

նյութ – ցանկացած բաղադրիչ, հումք, բաղադրամաս կամ մաս և այլն, որը օգտագործվում է արտադրանքի արտադրության ժամանակ,

արտասահմանյան ծագում ունեցող նյութ – նյութ, որը չի ծագել Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքից, կամ նյութ, որի ծագումը որոշված չէ,

արտադրանք – պատրաստված (արտադրված) արտադրանք, նույնիսկ եթե այն նախատեսված է հետագա այլ արտադրական գործողություններում օգտագործման համար,

արտադրանքների հավաքածու – էլեմենտների/արտադրանքների խումբ, որը դասակարգվում է որպես հավաքածու` ԱԱ ԱՏԳ մեկնաբանության 3-րդ Հիմնական կանոնին համապատասխան,

ապրանք – մաքսային սահմանով տեղափոխվող ցանկացած գույք, ինչպես նյութ, այնպես էլ արտադրանք, այդ թվում` ջերմային, էլեկտրական, էներգիայի այլ ձևեր և տրանսպորտային միջոցներ (բացառությամբ` տրանսպորտային միջոցների, որոնք կատարում են ապրանքների և ուղևորների միջազգային փոխադրումներ),

ապրանքի խմբաքանակ – ապրանքներ, որոնք մատակարարվում են միաժամանակ մեկ կամ մի քանի

ապրանքատրանսպորտային փաստաթղթերով մեկ բեռնառաքիչի կողմից մեկ բեռնաստացողի հասցեով, ինչպես նաև ապրանքներ՝ մեկ փոստային բեռնագրով տեղափոխվող, կամ սահմանը հատող մեկ անձի կողմից՝ որպես ուղեբեռ տեղափոխվող,

արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱԱ ԱՏԳ) - Անկախ Պետությունների Համագործակցության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ, որը օգտագործվում է 1995 թվականի նոյեմբերի 3-ի Անկախ Պետությունների Համագործակցության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքացանկի մասին Համաձայնագրին համապատասխան,

գին՝ ֆրանկո - գործարան պայմաններով – ապրանքի գին, որը ենթակա է վճարման արտադրողին, որի ձեռնարկությունում կատարվել է վերջին մշակումը/վերամշակումը՝ ֆրանկո - գործարան պայմաններով,

ռեզիդենտ – ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններ կամ կազմակերպություններ, որոնք Համաձայնագրի մասնակից պետության օրենսդրությամբ ենթակվում են այդ երկրում հարկման՝ բնակության վայրի, հիմնական կայանման վայրի, կառավարման, հաշվառման վայրի և այլ նմանատիպ այլ բնութագրերի ստեղծման հիման վրա,

Սակայն նշված հասկացության մեջ չեն ներառվում անձինք, որոնք ենթարկվում են Համաձայնագրի մասնակից պետությունում հարկման միայն եկամտի մասով, որը ստացված է արտադրության և/կամ ապրանքների սպառման հետ չկապված գործողություններից,

բեռնառաքիչ/բեռնաստացող – անձ, որը նշված է ապրանքատրանսպորտային փաստաթղթերում, ով համաձայն ստանձնած պարտականությունների փոխանցել/ստացել է կամ մտադիր է փոխանցել/ստանալ ապրանքները փոխադրողին/փոխադրողից,

արտահանող – Համաձայնագրի մասնակից պետություններից մեկի ռեզիդենտ, որը համարվում է արտաքին տնտեսական պայմանագրի/գործարքի կողմ և մատակարարում ապրանքը Համաձայնագրի մեկ ուրիշ մասնակից պետության ռեզիդենտին,

ներմուծող - Համաձայնագրի անդամ պետություններից մեկի ռեզիդենտ, որը համարվում է արտաքին տնտեսական պայմանագրի/գործարքի կողմ և Համաձայնագրի մասնակից պետությունում ստանում է ապրանքը, որը մատակարարվում է Համաձայնագրի մեկ ուրիշ մասնակից պետության ռեզիդենտի կողմից,

հայտարարատու (դեկլարանտ) – անձ, որը դիմել է արտահանող երկրի լիազորված մարմնին (կազմակերպությանը) ապրանքի ծագման երկրի հավաստագիր ստանալու համար, որը հաստատում և պատասխանատվություն է կրում ապրանքի մասին տեղեկությունների հավաստիության մասին՝ նշված ապրանքի ծագման մասին հավաստագրում,

Հայտարարատուները (դեկլարանտները) կարող են հանդիսանալ արտահանողները, ապրանքի բեռնառաքիչները կամ նրանց շահերը ներկայացնող անձինք՝ արտահանող երկրի ազգային օրենսդրությանը համապատասխան (լիազորագրի, հանձնարարականի պայմանագրի և այլ փաստաթղթերի հիման վրա):

Նշված հասկացության մեջ կարող են ներառվել նաև ներմուծողը, ապրանքի բեռնաստացողը կամ նրանց շահերը ներկայացնող անձինք՝ արտահանող երկրի ազգային օրենսդրությանը համապատասխան (լիազորագրի, հանձնարարականի պայմանագրի և այլ փաստաթղթերի հիման վրա):

ապրանքի ծագման մասին հավաստագիր – փաստաթուղթ, որը վկայում է ապրանքի ծագման երկրի մասին և տրված է Համաձայնագրի մասնակից պետության լիազոր մարմնի (կազմակերպության) կողմից իր ազգային օրենսդրությանը համապատասխան,

ապրանքի ծագման մասին հայտարարագիր – ապրանքի ծագման մասին դիմում, որը կազմվել է արտադրողի, վաճառողի կամ ապրանքներ տեղափոխող անձի կողմից՝ կոմերցիոն հաշվի կամ ապրանքին վերաբերող այլ փաստաթղթի վրա:

Բաժին 2

Ապրանքների ծագման երկրի որոշում

2.1. Ապրանքի ծագման երկիր է համարվում Համաձայնագրի մասնակից երկիրը, որի տարածքում ապրանքը ամբողջովին արտադրված է կամ երթարկված է բավարար մշակման/վերամշակման՝ սույն Կանոններին համապատասխան:

2.2. Ապրանքները, որոնք ամբողջությամբ արտադրված են Համաձայնագրի մասնակից պետությունում համարվում են՝

ա) բնական ռեսուրսներ (օգտակար հանածոներ և հանքային արտադրանք, ջրային, հողային ռեսուրսներ, մթնոլորտային օդի ռեսուրսներ) հանված տվյալ երկրի ընդերքից, իր տարածքից կամ տարածքային ծովից (երկրի այլ ջրավազանից) կամ դրա հատակից, կամ տվյալ երկրի տարածքի մթնոլորտային օդից,

բ) բուսական ծագում ունեցող արտադրանք՝ աճեցված և/կամ հավաքած տվյալ երկրում,

- գ) կենդանի կենդանիներ՝ ծնված և մեծացրած տվյալ երկրում,
- դ) արտադրանք՝ ստացված տվյալ երկրում մեծացրած կենդանիներից,
- ե) արտադրանք՝ ստացված տվյալ երկրում որսորդության և ձկնորսության արդյունքում,
- զ) ծովային ձկնորսության արտադրանք և այլ ծովային արտադրանք՝ ստացված տվյալ երկրի կամ իր կողմից վարձակալված նավի միջոցով,
- է) արտադրանք՝ ստացված տվյալ երկրի վերամշակող նավի տախտակամածի վրա միայն այն արտադրանքից, որը նշված է գ ենթակետում,
- ը) արտադրանք՝ ստացված տվյալ երկրի ծովային տարածքից դուրս ծովային հատակից կամ ծովային ընդերքից այն պայմանով, որ տվյալ երկիրը ունի բացառիկ իրավունքներ նշված ծովային հատակի և ծովային ընդերքի մշակման համար,
- թ) թափոններ և ջարդոններ (երկրորդական հումք)՝ ստացված արտադրական և այլ գործողությունների վերամշակման արդյունքում, ինչպես նաև նախկինում օգտագործման համար նախատեսված արտադրատեսակներ, տվյալ երկրում հավաքված և միայն հումքի վերամշակման համար պիտանի,
- ժ) բարձր տեխնոլոգիաների արտադրանք՝ ստացված բաց տիեզերքում տիեզերանավերի վրա, որոնք պատկանում են տվյալ երկրին կամ վարձակալված են դրա կողմից,
- ժա) ապրանքներ, պատրաստված տվյալ երկրում այն արտադրանքներից, որոնք նշված են սույն կետի ա-ժ ենթակետերում:

2.3. Համաձայնագրի մասնակից պետությունում պատրաստված ապրանքի ծագման երկրի որոշման նպատակներով կարող է կիրառվել կուտակային սկզբունքը, որը այս կամ այն ապրանքի ծագումը որոշում է նրա հաջորդական մշակման/վերամշակման ժամանակ:

Եթե Համաձայնագրի մասնակից պետություններից մեկում վերջնական ապրանքի արտադրությունում օգտագործվում են նյութեր՝ ծագած Համաձայնագրի մասնակից պետությունից կամ մի քանի պետություններից, ապրանքի ծագման մասին CT-1 ձևի (այնուհետ՝ CT-1 ձևի հավաստագիր, կամ հավաստագիր) հավաստագրով (հավաստագրերով) հավաստված և մեկ կամ մի քանի այլ Համաձայնագրի մասնակից պետություններում ենթարկված հետագա փուլային մշակման/վերամշակման, ապա ապրանքի ծագման երկիրը համարվում է այն երկիրը, որի տարածքում այն վերջին անգամ ենթարկվել է մշակման/վերամշակման:

Համաձայնագրի այլ անդամ պետություններից նյութերի ծագման մասին CT-1 ձևի հավաստագրի (հավաստագրերի) բացակայության պարագայում վերջնական ապրանքի ծագման երկրի որոշումը կատարվում է բավարար մշակման/վերամշակման չափանիշի հիման վրա (սույն Կանոնների 2.4 կետի ա, բ, գ ենթակետեր):

2.4. Ապրանքի արտադրության ժամանակ երրորդ երկրի մասնակցության դեպքում, բացի Համաձայնագրի մասնակից պետություններից, ապրանքի ծագման երկիրը որոշվում է ապրանքի բավարար մշակման/վերամշակման չափանիշին համապատասխան:

Բավարար մշակման/վերամշակման չափանիշը կարող է արտահայտվել հետևյալ պայմանների կատարմամբ.

ա) ԱՏԳ ԱԱ ապրանքային դիրքի փոփոխում, գոնե առաջին չորս նիշերից մեկի մակարդակով, որը առաջացել է մշակման/վերամշակման արդյունքում,

բ) անհրաժեշտ պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների կատարում, որի ժամանակ ապրանքը համարվում է ծագած այն երկրից, որի տարածքում այդ գործողությունները տեղի են ունեցել,

գ) ադվալորային մասի կանոնը, երբ օգտագործվող արտասահմանյան ծագման նյութերի արժեքը հասնում է վերջնական արտադրանքի գնում ֆիքսված տոկոսային մասի:

Բավարար մշակման/վերամշակման չափանիշի հիմնական պայմանն է համարվում ԱՏԳ ԱԱ ապրանքային դիրքի փոփոխումը, գոնե առաջին չորս նիշերից մեկի մակարդակով: Այդ պայմանը օգտագործվում է բոլոր ապրանքների նկատմամբ, բացառությամբ այն ապրանքների, որոնք ներառված են պայմանների՝ արտադրական և տեխնոլոգիական գործողությունների, որոնց կատարման դեպքում ապրանքը համարվում է ծագած այն երկրից, որտեղ դրանք տեղի են ունեցել, Ցանկում (այնուհետ՝ Ցանկ) (հավելված 1, որը համարվում է սույն կանոնների անբաժանելի մասը):

Նշված Ցանկում, որպես մեկ պայման կարող է ներառվել ադվալորային մասի կանոնը ինչպես ինքնուրույն, այնպես էլ այլ անհրաժեշտ պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների կատարման հետ զուգահեռ, որոնք շարադրված են սույն կետի բ ենթակետում:

Այն դեպքում, երբ կիրառվում է ադվալորային մասի կանոնը, գնային ցուցանիշները հաշվարկվում են՝ արտասահմանյան ծագում ունեցող նյութերի համար՝ այդպիսի նյութերի մաքսային արժեքով՝ դրանք երկիր ներմուծման ժամանակ, որի տարածքում կատարվում է վերջնական ապրանքի արտադրությունը, կամ իրենց առաջին վաճառքի փաստաթղթով հաստատված գնով այն երկրի տարածքում, որտեղ կատարվում է վերջնական ապրանքի արտադրությունը,

վերջնական ապրանքի համար գնով՝ ֆրանկո գործարանի պայմանների հիման վրա:

2.5. Ապրանքների ծագման երկրի որոշման նպատակներով բավարար մշակման/վերամշակման չափանիշին համապատասխան նյութերը՝ ծագած Համաձայնագրի մասնակից պետություններից սույն կանոններին համապատասխան, չեն դիտարկվում, որպես արտասահմանյան ծագում ունեցող նյութեր և հավասարվում են այն երկրից ծագածներին, որտեղ արտադրվել է վերջնական ապրանքը:

2.6. Ապրանքների ծագման երկրի որոշման ժամանակ բավարար մշակման/վերամշակման չափանիշին համապատասխան թույլատրվում է արտասահմանյան ծագում ունեցող նյութերի օգտագործումը, որոնք ունեն վերջնական ապրանքի նույն ապրանքային դիրքը (առաջին չորս նիշերի մակարդակով), պայմանով, որ դրանց գինը չի գերազանցում վերջնական ապրանքի գնի 5%-ը ֆրանկո գործարանի պայմաններով և այդ նյութերը

համարվում են վերջնական ապրանքի (բացառությամբ այն ապրանքների, որոնց համար Ցանկում նշված են այլ պայմաններ) արտադրության համար անհրաժեշտ բաղադրիչ՝ այդ պայմանների կատարման մասին պարտադիր հաստատված փորձաքննության ակտով կամ ապրանքի ծագման մասին եզրակացությունով, որը տրված է լիազոր մարմնի կամ այլ կազմակերպության կողմից Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան:

2.7. Եթե արտադրանքը, որի ծագումը համապատասխանում է սույն Կանոնների պայմաններին, օգտագործվում է այլ ապրանքի արտադրության մեջ, ապա կիրառվող նյութերի հանդեպ, որոնք օգտագործվել են այլ ապրանքի արտադրությունում, ծագման վերաբերյալ պահանջները հաշվի չեն առնվում ապրանքի ծագման երկրի որոշման ժամանակ:

Բաժին 3

Ապրանքի բավարար մշակման/վերամշակման չափանիշին չհամապատասխանող գործողություններ

3.1. Ապրանքի բավարար մշակման/վերամշակման չափանիշին չհամապատասխանող են համարվում.

ա) ապրանքի պահպանման կամ տեղափոխման ժամանակ ապրանքի պահպանվածությունը ապահովող գործողություններ,

բ) ապրանքը վաճառքի և տեղափոխման նպատակով նախապատրաստող գործողություններ (խմբաքանակները մասերի բաժանում, առաքման ձևավորում, տեսակավորում, վերափաթեթավորում), փաթեթավորման քանոնման և հավաքման գործողություններ,

գ) լվացում, մաքրում, փոշեհեռացում, օքսիդապատում, յուղով կամ այլ նյութերով պատում,

դ) արդուկում կամ տեքստիլի մամլում (թելքի և մանվածքի ցանկացած տեսակներ, գործվածքներ ցանկացած թելքից և մանվածքից և արտադրատեսակներ դրանցից),

ե) ներկելու կամ փայլեցնելու գործողություններ,

զ) թեփահանում, մասնակի կամ ամբողջական սպիտակեցում, բրնձի և հացահատիկի փայլեցում և հղկում,

է) շաքարը ներկելու կամ շաքարը կտորներով ձևավորելու գործողություններ,

ը) կեղևահանում, կորիզահանում և մրգերի, բանջարեղենի և ընկույզի կտրատում,

թ) սրում, աղում կամ կտրատում, որը չի հանգեցնում ստացված բաղադրամասերի էական տարբերության սկզբնական ապրանքից,

ժ) մաղերով մաղում, տեսակավորում, դասակարգում, ընտրում, հավաքում (այդ թվում՝ արտադրանքների հավաքածուների կազմում),

ժա) լցնում, տարայավորում՝ բանկաների, շշերի, պարկերի և տուփերի մեջ և փաթեթավորման այլ

տարրական գործողություններ,

ժբ) հավաքման տարրական գործողություններ կամ ապրանքների մասերի կազմատում,

ժգ) արտադրանքը բաղադրամասերի բաժանում, որի ժամանակ ստացված բաղադրամասերը էականապես չեն տարբերվում սկզբնական արտադրանքից,

ժդ) ապրանքների (բաղադրամասերի) խառնում, որի ժամանակ ստացված արտադրանքը էականապես չի տարբերվում սկզբնական բաղադրամասերից,

ժե) կենդանիների սպանդ, մսի կտրատում (տեսակավորում),

ժզ) վերը նշված երկու կամ ավելի գործողությունների համակցում:

3.2. Եթե այս կամ այն ապրանքի հանդեպ կատարվում է բավարար մշակման/վերամշակման չափանիշի ապահովում (սույն Կանոնների 2.4 կետ) միայն 3.1 կետում նշված գործողությունների հաշվին, ապա այդ ապրանքը չի համարվի ծագած այն երկրից, որտեղ այդ գործողությունները տեղի են ունեցել:

Բաժին 4

Ապրանքի ծագման երկրի որոշման առանձնահատկությունները

4.1. Բավարար մշակման/վերամշակման չափանիշի կիրառման առարկա է համարվում այս կամ այն արտադրանքը, որը որոշվում է որպես ինքնուրույն դասակարգման առարկա՝ ԱՏԳ ԱԱ ապրանքների դասակարգման կանոններին համապատասխան: Արտադրանքի հավաքածուի ծագման երկիրը որոշելու դեպքում, որպես բավարար մշակման/վերամշակման չափանիշի օգտագործման առարկա ուսումնասիրվում է յուրաքանչյուր առանձին մասնիկ, որը ներառված է հավաքածուի մեջ:

Համապատասխանաբար՝

արտադրանքը, որը կազմված է տարրերի խմբից կամ հավաքված է մի շարք մասերից և դասակարգվում է ԱՏԳ ԱԱ դրույթներին համապատասխան որպես միասնական ապրանք, ընդհանուր առմամբ ուսումնասիրվում է որպես բավարար մշակման/վերամշակման չափանիշի կիրառման առարկա,

եթե ապրանքների խմբաքանակը բաղկացած է նույնատիպ արտադրանքից՝ դասակարգվող նույն ԱՏԳ ԱԱ ապրանքային դիրքում, ապա յուրաքանչյուր արտադրանքը պետք է ուսումնասիրվի առանձին՝ բավարար մշակման/վերամշակման չափանիշի կիրառման նպատակով,

եթե ԱՏԳ ԱԱ 5-րդ Հիմնական կանոնի ԱՏԳ ԱԱ մեկնաբանության համապատասխան փաթեթավորումը դասակարգվում է իր մեջ ներառված արտադրանքների հետ միասին, ապա տվյալ ապրանքի ծագման երկրի որոշման ժամանակ փաթեթավորումը պետք է դիտարկվի որպես ապրանքի բաղադրամաս:

4.2. Կազմատած կամ չհավաքված տեսքով ապրանքները (մի քանի խմբաքանակներով մատակարարվող՝ եթե արտադրական կամ տրանսպորտային պայմաններով հնարավոր չէ մեկ խմբաքանակով մատակարարել, ինչպես նաև եթե խմբաքանակը բաժանված է մի քանի խմբաքանակների՝ սխալ հասցեագրման կամ վրիպումի պատճառով) ծագման երկրի որոշման ժամանակ կարող են դիտարկվել որպես միասնական ապրանք՝ հայտարարատուի ցանկությամբ:

Այս կանոնի կիրառման պայմաններն են՝

ներմուծող երկրի մաքսային մարմնին նախնական ծանուցում՝ կազմատած կամ չհավաքված ապրանքի մի քանի խմբաքանակների բաժանման մասին նշելով այդ բաժանման պատճառները, կցելով յուրաքանչյուր խմբաքանակի մանրամասն առանձնահատկությունները նշելով ապրանքների ծածկագրերը՝ համաձայն ԱՏԳ ԱԱ, ապրանքների գինը և ծագման երկրները, որոնք ներառված են յուրաքանչյուր խմբաքանակում, ինչպես նաև ծանուցում՝ վրիպման կամ սխալ հասցեագրման արդյունքում ապրանքը մի քանի խմբաքանակների բաժանման մասին՝ ապրանքի սխալմամբ բաժանման թղթային հաստատման դեպքում,

բոլոր խմբաքանակների մատակարարում մեկ երկրից մեկ արտահանողի կողմից, ապրանքի բոլոր խմբաքանակների ներմուծում և ձևակերպում նույն մաքսատան միջոցով,

ապրանքի բոլոր խմբաքանակների մատակարարում սահմանված ժամկետում՝ ոչ ուշ, քան մաքսային հայտարարագրի ընդունման օրվանից վեց ամիս հետո:

4.3. Ապրանքի ծագման երկրի որոշման համար դրա արտադրության համար օգտագործվող ջերմային և էլեկտրական էներգիայի, մեքենաների, սարքավորումների և գործիքների, ինչպես նաև այն արտադրանքների, որոնք ներառված չեն և նախատեսված չեն վերջնական ապրանքի բաղադրության մեջ, ծագումը չի հաշվի առնվում:

4.4. Հարմարանքները, պարագաները, պահեստային մասերը և գործիքները, որոնք նախատեսված են մեքենաների, սարքավորումների, ապարատների կամ տրանսպորտային միջոցների հետ օգտագործման համար, համարվում են ծագած նույն երկրից, որտեղից ծագել են մեքենաները, սարքավորումները, ապարատները կամ տրանսպորտային միջոցները, եթե տվյալ հարմարանքները, պարագաները, պահեստային մասերը և գործիքները ներմուծվում և վաճառվում են վերը նշված մեքենաների, սարքավորումների, ապարատների կամ տրանսպորտային միջոցների հետ միասին և այն քանակությամբ, որքան սովորաբար տվյալ սարքերի հետ մատակարարվում է:

4.5. Փաթեթավորումը, որով ապրանքը ներմուծվում է մաքսային տարածք համարվում է ծագած նույն երկրից, որտեղից և ապրանքն է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փաթեթավորումը ենթակա է հայտարարագրման՝ ապրանքից առանձին: Այդ դեպքում փաթեթավորման ծագման երկիրը որոշվում է առանձին:

Եթե փաթեթավորումը, որով ապրանքը ներմուծվում է մաքսային տարածք համարվում է ծագած նույն երկրից, որտեղից և ապրանքն է, ապա ապրանքի ծագման երկրի որոշման նպատակով հաշվի է առնվում միայն այն

փաթեթավորումը, որով ապրանքը սովորաբար սպառվում է մանրածախ առևտրում, այդ թվում ադվալորային մասնաբաժնի կանոնի կիրառման ժամանակ՝ սույն Կանոնների 2.4 կետի «բ» ենթակետին համապատասխան:

4.6. Արտադրանքների հավաքածուի ծագման երկրի որոշման ժամանակ թույլատրվում է տարրերի կամ արտադրանքների օգտագործումը, որոնցից բաղկացած է հավաքածուն՝ Համաձայնագրի մասնակից պետություններից չծագած, այն պայմանով, որ դրանց արժեքը չի գերազանցում արտադրանքների հավաքածուի գնի 15%-ը՝ ֆրանկո-գործարան պայմանների հիման վրա:

Բաժին 5

Ազատ առևտրի ռեժիմի տրամադրում

5.1. Ապրանքը Համաձայնագրի մասնակից պետությունների մաքսային տարածքներում օգտվում է ազատ առևտրի ռեժիմից, եթե այն համապատասխանում է ծագման չափանիշներին՝ սահմանված սույն Կանոններով, ինչպես նաև եթե ապրանքը՝

ա) արտահանվում է Համաձայնագրի մեկ մասնակից պետության մաքսային տարածքից և ներմուծվում է Համաձայնագրի մյուս մասնակից պետության մաքսային տարածք՝ Համաձայնագրի մեկ մասնակից պետության ռեզիդենտի և Համաձայնագրի մյուս մասնակից պետության ռեզիդենտի միջև կնքված պայմանագրի հիման վրա: Սույն Կանոնների 8.5 և 8.6 ենթակետերում նշված դեպքերում նման պայմանագիրը կարող է կնքվել ապրանքի արտահանումից հետո,

բ) արտահանվում է (ներմուծվում է) Համաձայնագրի մեկ մասնակից պետության մաքսային տարածքից Համաձայնագրի մյուս մասնակից պետության մաքսային տարածք ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձի կողմից.

գ) դուրս չի գալիս Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներից՝ բացառությամբ դեպքերի, երբ ապրանքը գտնվում կամ տեղափոխվում է երրորդ երկրի տարածքով մաքսային հսկողությամբ՝ փաստաթղթերով հաստատված այն երկրների մաքսային մարմինների կողմից, որի տարածքներով իրականացվում է ապրանքի մատակարարումը: Այդ դեպքում ապրանքը պետք է չփոփոխվի և դրա հանդեպ չպետք է կատարվի որևէ գործողություն, բացառությամբ՝ ապրանքի փոխաբեռնման և պահպանվածության ապահովման գործողությունների:

5.2. Ազատ առևտրի ռեժիմը չի տրամադրվում այն դեպքում, եթե ապրանքի հանդեպ սեփականության իրավունքը՝ արտաքին առևտրային պայմանագրին/գործարքին համապատասխան, ինչպես նաև այլ դեպքերում՝ նախատեսված Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրությամբ, պատկանում է այն անձին, որը չի համարվում Համաձայնագրի մասնակից պետության ռեզիդենտ:

Նշված դեպքում, ինչպես նաև եթե սույն Կանոնների 5.1 ենթակետով նախատեսված նույնիսկ մեկ պայմանը չի կատարվում, դիմողի (հայտարարատուի) խնդրանքով լիազորված մարմնի (կազմակերպության) կողմից տրամադրվում են ընդհանուր ձևի (առանց CT-1 հապավման) ապրանքի ծագման մասին հավաստագրեր՝ արտահանող երկրի ազգային օրենսդրությանը համապատասխան:

5.3. Ապրանքները, որոնց ծագումը հաստատված չէ կամ հաստատված է, բայց այդ դեպքում դրանց հանդեպ չի կարող կիրառվել ազատ առևտրի ռեժիմը՝ այդ նպատակների համար համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով, ներմուծման երկիր անցկացվում են՝ ներմուծող երկրի սակագնային և ոչ սակագնային կարգավորման պահանջներին համապատասխան:

5.4. Սույն Կանոնների 5.3 կետում նշված ապրանքների նկատմամբ կարող է կիրառվել (վերականգնվել) Համաձայնագրի մասնակից երկրների մաքսային տարածքներում ազատ առևտրի ռեժիմը՝ դրանց ծագման մասին պատշաճ վկայականի ստացման պայմանով (CT-1 ձևի հավաստագրի և անհրաժեշտության դեպքում ապրանքի ծագման երկիրը հաստատող այլ փաստաթղթերի ներկայացում) մինչև ներմուծող երկրում մաքսային հայտարարագրի գրանցման օրվանից 12 ամիսը լրանալը (բացառությամբ՝ CT-1 ձևի հավաստագրի կեղծման դեպքերից):

Բաժին 6

Ապրանքի ծագման երկրի հաստատում

6.1. Համաձայնագրի կոնկրետ մասնակից երկրում ապրանքի ծագման երկրի հավաստագրի հաստատման համար՝ ազատ առևտրի ռեժիմի տրամադրման նպատակով, անհրաժեշտ է ներմուծող երկրի մաքսային մարմիններին ներկայացնել CT-1 ձևի հավաստագրի բնօրինակը (հավաստագրի ձևաթուղթը ներկայացված է հավելված 2-ում, որը համարվում է սույն Կանոնների անբաժանելի մաս) կամ ապրանքի ծագման մասին հայտարարագիրը:

6.2. Դեպքերը, երբ որպես ապրանքի ծագման երկիրը հաստատող փաստաթուղթ կարող է ներկայացվել ապրանքի ծագման մասին հայտարարագիրը, ինչպես նաև երբ ծագման երկրի մասին փաստաթղթերի ներկայացումը պարտադիր չէ, որոշվում են ներմուծող երկրի ազգային օրենսդրությանը համապատասխան:

6.3. Համաձայնագրի մասնակից պետություններից ապրանքների արտահանման ժամանակ CT-1 ձևի հավաստագիրը տրամադրվում է արտահանող պետության լիազոր մարմնի (կազմակերպության) կողմից (այնուհետ՝ լիազոր մարմին) ազգային օրենսդրությանը համապատասխան:

6.4. CT-1 ձևի հավաստագիրը ձևակերպվում և տրամադրվում է ապրանքների մեկ խմբաքանակի համար: CT-1 ձևի հավաստագրի օգտագործման ժամկետը՝ ազատ առևտրի ռեժիմի տրամադրման նպատակով,

սահմանափակված է 12 ամիս ժամկետով՝ դրա տրամադրման օրվանից:

6.5. Համաձայնագրի մասնակից պետությունները փոխանակում են CT-1 ձևի հավաստագրի ձևաթղթերով, հավաստագրերը վկայելու իրավունք ունեցող անձանց ստորագրության նմուշներով, լիազոր մարմինների կնիքների արտատիպերով, ինչպես նաև լիազոր մարմինների անվանման և հասցեի մասին տեղեկատվություն: Առանց նշված տեղեկատվության տրամադրման, ներմուծող երկրի մաքսային մարմինների կողմից չեն ճանաչվում հավաստագրերը՝ ազատ առևտրի ռեժիմը տրամադրելու համար:

6.6. Այն դեպքում, երբ տրամադրված հավաստագրի 9-րդ սյունակում նշված ապրանքային դիրքի մասին տեղեկատվությունը, որով դասակարգվում է վերջնական ապրանքը, տարբերվում է տեղեկատվությունից, որը նշված է մաքսային հայտարարագրում, ազատ առևտրի ռեժիմի տրամադրման հնարավորության մասին հարցը ներմուծող երկրի մաքսային մարմինների կողմից որոշվում է ներմուծողի/բեռնաստացողի կողմից ապրանքի ծագման մասին եզրակացությունը կամ փորձագիտական ակտը ներկայացնելուց հետո, որը տրամադրվել է Համաձայնագրի մասնակից պետության ազգային օրենսդրության համապատասխան լիազոր մարմնի կամ այլ կազմակերպությունների կողմից և միաժամանակ վկայում է այն մասին, որ ապրանքը ենթարկվել է Համաձայնագրի մասնակից պետությունում բավարար մշակման/վերամշակման:

6.7. CT-1 ձևի հավաստագրի կամ դրա մեջ ներառված տեղեկատվությունների անթերիության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում, ներմուծող երկրի մաքսային մարմինը կարող է դիմել CT-1 ձևի հավաստագիրը հավաստող լիազոր մարմնին, կամ ապրանքի ծագման երկրի իրավասու մարմիններին խնդրանքով՝ հայտնել լրացուցիչ կամ հստակեցնող տեղեկություններ, ներառյալ խնդրանքներ, կապված CT-1 ձևի հավաստագրերի պարզ ընտրովի ստուգումների հետ, որի պատասխանը պետք է տրամադրվի դիմելու օրվանից վեց ամսվա ընթացքում:

6.8. CT-1 ձևի հավաստագրերի տրման մասին հրահանգ փաստաթուղթը մշակվում և հաստատվում է լիազոր մարմնի կողմից, կամ Համաձայնագրի մասնակից պետության ազգային օրենսդրությամբ նախատեսված այլ կարգով:

Բաժին 7

CT-1 ձևի ապրանքի ծագման երկրի հավաստագրի լրացման կարգը և պահանջները

7.1. CT-1 ձևի հավաստագիրը ձևակերպվում է հատուկ պաշտպանված A4 ֆորմատի (210x297 մմ) ոչ պակաս, քան 25 գ/քմ խտությամբ, տպագրական եղանակով պատրաստված ձևաթղթի վրա, տպագիր՝ ռուսերեն լեզվով:

7.2. CT-1 ձևի հավաստագրի պատճենը, ինչպես նաև դրա հետ կապված ապրանքների ծագումը հաստատող

ցանկացած փաստաթղթերը, պահպանվում են հավաստագիրը տրամադրող լիազոր մարմնում ոչ պակաս, քան 3 տարի:

7.3. Հավաստագրում չեն թույլատրվում անձանց ֆաքսիմիլե ստորագրությունների օգտագործումը, ջնջումների, ինչպես նաև ուղղումների և/կամ լրացումների առկայությունը, որոնք հավաստված չեն սահմանված կարգով:

Հավաստագրում ուղղումները և/կամ լրացումները կատարվում են սխալ տեղեկատվությունը ջնջելով և տպելով կամ ձեռագրով նշելով ճշգրիտ տեղեկությունները, որոնք հավաստվում են CT-1 ձևի հավաստագիրը տրամադրող լիազոր մարմնի ստորագրությամբ և լիազոր մարմնի կնիքով:

7.4. CT-1 ձևի հավաստագրի լրացումը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1-րդ սյունակ - Բեռնառաքիչ/արտահանող (անվանումը և հասցեն): Սյունակի լրացման ժամանակ թույլատրվում է նշել բեռնառաքիչի/արտահանողի անվանումը՝ համաձայն պետական գրանցման վկայականի, կամ այն փաստաթղթի, որը հաստատում է բեռնառաքիչի/արտահանողի փաստացի գտնվելու վայրը:

Այն դեպքում, եթե բեռնառաքիչը և արտահանողը համարվում են տարբեր իրավաբանական անձինք, ապա պետք է նշել, որ բեռնառաքիչը (անվանումը և հասցեն) գործում է արտահանողի (անվանումը և հասցեն) «հանձնարարությամբ»,

2-րդ սյունակ - Բեռնաստացող/ներմուծող (անվանումը և հասցեն): Սյունակի լրացման ժամանակ թույլատրվում է նշել բեռնաստացողի/ներմուծողի անվանումը՝ համաձայն պետական գրանցման վկայականի, կամ այն փաստաթղթի, որը հաստատում է բեռնաստացողի/ներմուծողի փաստացի գտնվելու վայրը:

Այն դեպքում, եթե բեռնաստացողը և ներմուծողը համարվում են տարբեր իրավաբանական անձինք, ապա պետք է նշել, որ բեռնաստացողը (անվանումը և հասցեն) գործում է ներմուծողի (անվանումը և հասցեն) հանձնարարությամբ,

3-րդ սյունակ - Տրանսպորտային միջոցներ և ընթացքի երթուղին (որքանով դա հայտնի է): Նշվում են տրանսպորտային միջոցները և ընթացքի երթուղին, որքանով դա հայտնի է:

4-րդ սյունակ – նշվում է հավաստագրի գրանցման համարը, հավաստագիրը տրամադրող երկիրը և երկիրը, որի համար այդ հավաստագիրը նախատեսված է:

Գրանցման համարը թույլատրվում է գրել ձեռագրով, կամ դրոշմավորման միջոցով:

5-րդ սյունակ - Ծառայողական նշումների համար: Ապրանքը արտահանող, տարանցող և/կամ ստացող երկրների պետական վերահսկող մարմինների ծառայողական գնահատականները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հետևյալ գրառումները՝ Կրկնօրինակ, Հավաստագրի փոխարեն տրված, Հետագայում տրված, և սույն Կանոններով նախատեսված այլ գրառումները տպվում են, գրվում են ձեռագրով կամ դրոշմավորվում են:

Տվյալ սյունակում ձեռագրով ավելացված գրառումները հաստատվում են սույն Կանոնների 7.3 կետի երկրորդ

պարբերությամբ նախատեսված կարգով:

6 -րդ սյունակ - Համար: Նշվում է ապրանքի հերթական համարը:

7-րդ սյունակ – Փաթեթավորման ձևը և տեղերի քանակը: Նշվում է տեղերի քանակը և փաթեթավորման ձևը:

8-րդ սյունակ - Ապրանքի նկարագիրը: Նշվում է ապրանքի կոմերցիոն անվանումը և այլ տեղեկություններ, որոնք թույլ են տալիս անցկացնել ապրանքի միանշանակ նույնացումը ներկայացվածի հետ՝ մաքսային ձևակերպման նպատակների համար:

8-րդ սյունակի լրացման համար նախատեսված տեղը չբավարարելու դեպքում թույլատրվում է ապրանքի ծագման մասին լրացուցիչ թղթի (թղթերի) օգտագործումը (լրացուցիչ թղթի ձևաթուղթը ներկայացված է հավելված 3, որը համարվում է սույն Կանոնների անբաժանելի մաս), որը լրացվում է սահմանված կարգով (ստորագրությամբ և կնիքով հաստատված և ունի նույն գրանցման համարը, որը նշված է հավաստագրի 4-րդ սյունակում):

Մեծ անվանացանկով ապրանքների խմբաքանակների տեղափոխման դեպքում այն պայմանով, որ բոլոր ապրանքները դասակարգվում են նույն ապրանքային դիրքում և ունեն նույն ծագման չափանիշ, թույլատրվում է հավաստագրի լրացուցիչ թերթի (թերթերի) փոխարեն օգտագործել ապրանքաուղեկցող փաստաթուղթը (հաշիվ-ապրանքագիր, հաշիվ-պրոֆորմա, տրանսպորտային ապրանքագիր/նավաբեռնագիր կամ ապրանքի քանակային բնութագիրն արտացոլող այլ փաստաթուղթ), որտեղ ներկայացված է ապրանքների ամբողջ ցանկը: Տվյալ ապրանքաուղեկցող փաստաթուղթը, որի առաջին էջի վրա դրվում է գրանցահամարը և համապատասխան հավաստագրի տրամադրման ամսաթիվը, ներկայացվում է ներմուծվող երկրի մաքսային մարմիններին հավաստագրի հետ միաժամանակ: Ապրանքաուղեկցող փաստաթղթի մեջ ապրանքների ծագման մասին տեղեկությունները հավաստվում են հավաստագիրը տրամադրող նույն լիազոր մարմնի կողմից: Այդ դեպքում հավաստագրի 8-րդ սյունակում նշվում է հղում համապատասխան ապրանքաուղեկցող փաստաթղթին՝ նշելով դրա տվյալները և էջերի քանակը, որոնցից այն բաղկացած է:

9-րդ սյունակ - Ծագման չափանիշ: Նշվում են ապրանքների ծագման հետևյալ չափանիշները.

П - ապրանք՝ ամբողջովին արտադրված Համաձայնագրի մասնակից պետությունում,

Д1905 - ապրանք՝ բավարար մշակման/վերամշակման ենթարկված, նշելով վերջնական արտադրանքի ԱՏԳ ԱԱ ապրանքային ծածկագրի առաջին չորս թիվը, օրինակ՝ 1905,

К - ապրանք, որի ծագման երկիրը որոշված է կուտակային սկզբունքի հիման վրա:

Եթե հավաստագրում հայտարարագրված են ապրանքներ՝ դասակարգված ԱՏԳ ԱԱ տարբեր ապրանքային դիրքերում և ունեն տարբեր ծագման չափանիշներ, ապա 9-րդ սյունակում նշվում են ծագման չափանիշները՝ տարբերակված բոլոր հայտարարագրված ապրանքների համար:

10-րդ սյունակ - Ապրանքի քանակը: Նշվում է քաշը բրուտտո/նետտո (կգ) և/կամ այլ քանակային բնութագրերը՝ համաձայն ԱՏԳ ԱԱ: Մատակարարված ապրանքի փաստացի քանակությունը չպետք է գերազանցի հավաստագրում նշված քանակության 5%-ից ավելին:

Նետտո քաշը նշվում է հաշվի առնելով առաջնային փաթեթավորումը, որը անբաժանելի է ապրանքից մանրածախ առևտրի ժամանակ:

Երկարաժամկետ արտաքին առևտրային պայմանագրերով/գործարքներով պարբերական թողարկման համար հավաստագրի տրամադրման դեպքում, եթե բեռը միևնույն բեռնառաքիչից գնում է նույն բեռնաստացիչին, այս սյունակի լրացումը պարտադիր չէ: Այդ դեպքում ազատ առևտրի ռեժիմը տրամադրվում է ներմուծվող պարբերական թողարկումների փաստացի քանակությամբ:

11-րդ սյունակ - Հաշիվ ապրանքագրի համարը և ամսաթիվը: Նշվում են հաշիվ ապրանքագրի, հաշիվ-պրոֆորմայի կամ այլ փաստաթղթի մասին տեղեկությունները, որոնք արտացոլում են ապրանքի ֆինանսական և/կամ քանակական պարամետրերը (երկարաժամկետ արտաքին առևտրային պայմանագրի/գործարքների իրականացման ժամանակ, եթե բեռը միևնույն բեռնառաքիչից գնում է նույն բեռնաստացողին այս սյունակի լրացումը պարտադիր չէ):

12-րդ սյունակ - Վկայական: Լրացվում է լիազոր մարմնի կողմից և պարունակում է նրա անվանումը, հասցեն, կնիքը և հավաստագրի տրամադրման ամսաթիվը, ինչպես նաև այն անձի ստորագրությունը, ազգանունը և անունը, որը լիազորված է հավաստել հավաստագիրը:

Ամսաթիվը, ինչպես նաև լիազոր մարմնի ազգանունը և անունը թույլատրվում է լրացնել ձեռագրով, կամ դրոշմավորմամբ:

13-րդ սյունակ - Դիմողի հայտարարագիր: Նշվում է երկիրը, որտեղ ապրանքը ամբողջությամբ արտադրվել կամ ենթարկվել է բավարար մշակման/վերամշակման, ապրանքի ծագման երկրի մասին տեղեկատվությունների հայտարարագրման ամսաթիվը, ինչպես նաև դրվում է դիմողի կնիքը, դիմողի լիազոր անձի ազգանունը, անունը և ստորագրությունը:

Ամսաթիվը, ինչպես նաև լիազոր մարմնի ազգանունը և անունը թույլատրվում է լրացնել ձեռագրով, կամ դրոշմավորմամբ:

Այն դեպքում, երբ ապրանքը արտահանվում է (ներմուծվում է) Համաձայնագրի մասնակից պետություններից մեկի ֆիզիկական անձի՝ ռեզիդենտի կողմից, СТ-1 ձևի հավաստագիրը լրացվում է հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները.

1-ին սյունակ – նշվում է բեռնառաքիչի ազգանունը, անվանատառերը և հասցեն,

2-րդ սյունակ – տվյալների առկայության դեպքում նշվում է բեռնաստացողի ազգանունը, անվանատառերը, հասցեն, ինչպես նաև նշում է կատարվում. «Ազատ շրջանառության համար»:

Թույլատրվում է, որ բեռնառաքիչը և բեռնաստացողը կարող է լինել նույն ֆիզիկական անձը,

5-րդ և 11-րդ սյունակները կարող են չլրացվել՝ տվյալների բացակայության դեպքում,

13-րդ սյունակը հավաստվում է բեռնառաքիչի ստորագրությամբ՝ նշելով ապրանքի ծագման երկրի մասին տեղեկատվության հայտարարագրման ամսաթիվը, ինչպես նաև բեռնառաքողի ազգանունը և անունը:

7.5. Հավաստագրի լրացումը ձևաթղթի հակառակ կողմի վրա չի թույլատրվում:

Բաժին 8

Հավաստագրի տրամադրման լրացուցիչ դեպքեր

8.1. CT-1 ձևի հավաստագիրը կարող է տրամադրվել ապրանքը արտահանելուց հետո՝ հայտարարատուի (դեկլարանտի) գրավոր դիմումի հիման վրա: Այդ դեպքում հայտարարատուն (դեկլարանտը) լիազոր մարմնին լրացուցիչ ներկայացնում է մաքսային հայտարարագիրը՝ մաքսային մարմնի համապատասխան գնահատականով, որը հաստատում է ապրանքի փաստացի արտահանումը²⁾ : Այս դեպքում հավաստագրի 5-րդ սյունակում նշվում է՝ Տրամադրված է հետագայում:

8.2. CT-1 ձևի հավաստագիրը կորցնելու կամ վնասելու դեպքում տրվում է դրա կրկնօրինակը: Կրկնօրինակի տրամադրման դեպքում «Վկայական» 12-րդ սյունակում նշվում է կրկնօրինակի տրամադրման ամսաթիվը, իսկ Ծառայողական գնահատականների համար 5-րդ սյունակում նշվում է Կրկնօրինակ բառը, կորցրած կամ վնասված CT-1 ձևի հավաստագրի բնօրինակի համարը և ամսաթիվը: Հավաստագրի կրկնօրինակը ուժի մեջ է մտնում բնօրինակի տրամադրման օրվանից: Հավաստագրի կրկնօրինակի օգտագործման ժամկետը՝ ազատ առևտրի ռեժիմի տրամադրման նպատակով, չի կարող գերազանցել հավաստագրի բնօրինակի տրամադրման օրվանից 12 ամիսը:

8.3. Ինչ-որ պատճառներով չեղյալ համարված CT-1 ձևի հավաստագրի փոխարեն, կամ հայտարարատուի (դեկլարանտի) գրավոր պարզաբանման հիման վրա նախկինում տրամադրված հավաստագրի վերաձևակերպման անհրաժեշտության դեպքում, կարող է տրամադրվել նոր CT-1 ձևի հավաստագիր: Այդ դեպքում 5-րդ սյունակում գրվում է հետևյալ գրագրումը. Տրամադրված է CT-1 ձևի հավաստագրի փոխարեն՝ նշելով չեղյալ համարված/վերաձևակերպված հավաստագրի համարը և ամսաթիվը: CT-1 ձևի հավաստագրի փոխարեն տրամադրված հավաստագրին տրվում է նոր հաշվառման համար:

8.4. Համաձայնագրի մասնակից պետությունների շրջանակներում այն ապրանքների, որոնք չեն ենթարկվել մշակման/վերամշակման, վերաարտահանման ժամանակ, բացառությամբ՝ ապրանքի և նրա փաթեթավորման պահպանումը ապահովելու, ինչպես նաև վաճառքի և տեղափոխման նախապատրաստման ուղղությամբ գործողությունների, հնարավոր է CT-1 ձևի փոխարինող հավաստագրերի տրամադրում:

CT-1 ձևի մեկ կամ մի քանի փոխարինող հավաստագրերի տրամադրումը հնարավոր է նաև Համաձայնագրի մասնակից պետությունների տարածք ապրանքների ներմուծման դեպքում՝ դրանք մաքսային հսկողության ենթարկելով և հետագայում խմբաքանակները կամ նրա մասերը բաց թողնելով ներմուծող երկրում ազատ շրջանառության մեջ:

Փոխարինող հավաստագրերը տրամադրվում են ներմուծող երկրի լիազոր մարմնի (կազմակերպման) կողմից՝ արտահանող երկրի CT-1 ձևի հավաստագրի (հավաստագրերի) հիման վրա:

Այդ դեպքում փոխարինող հավաստագրի 5-րդ սյունակում գրվում է հետևյալ գրառումը. Հավաստագիրը տրամադրված է CT-1 ձևի հավաստագրի հիման վրա (նշելով հավաստագիրը տրամադրող լիազոր մարմինը, հաշվառման համարը և ամսաթիվը), իսկ CT-1 ձևի փոխարինող հավաստագրի 9-րդ սյունակում նշվում է այն ծագման չափանիշը, որը նշված է CT-1 ձևի հավաստագրում, որի հիման վրա այն տրամադրվում է:

Այդ դեպքում, եթե փոխարինող հավաստագիրը տրամադրվում է CT-1 ձևի հավաստագրի հիման վրա՝ ձևակերպված հին օրինակի ձևաթղթի վրա առանց ծագման չափանշի նշման, 9-րդ սյունակում դրվում է գծիկ:

8.5. Այն դեպքում, երբ ապրանքը արտահանվում է ցուցահանդեսներին/տոնավաճառներին, որոնք անցկացվում են Համաձայնագրի մասնակից երկրներում, թույլատրվում է CT-1 ձևի հավաստագրի տրամադրումը: Այդ դեպքում հավաստագրի 2-րդ սյունակում նշվում է ցուցահանդեսի/տոնավաճառի կազմակերպման համար պատասխանատու կամ իր հանձնարարությամբ գործող անձը, իսկ 5-րդ սյունակում՝ ցուցահանդեսի/տոնավաճառի անվանումը: Այս ապրանքների համար ազատ առևտրի ռեժիմը տրամադրվում է Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների միջև դրանց փոխանցման կամ սպառման մասին պայմանագիրը կնքելուց հետո՝ սույն Կանոնների 5.1 կետի դրույթներին համապատասխան, եթե Համաձայնագրի մասնակից պետության ազգային օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

8.6. Համաձայնագրի մեկ մասնակից պետության տարածքից Համաձայնագրի մյուս մասնակից պետության տարածք ապրանքների տեղափոխման ժամանակ՝ հետագա իրացման նպատակով, հնարավոր է CT-1 ձևի հավաստագրի տրամադրումը, որտեղ որպես բեռնաստացող/ներմուծող (հավաստագրի 2-րդ սյունակ) նշվում է ապրանքները արտահանող բեռնառաքիչը: Այդ դեպքում հավաստագրի 2-րդ սյունակում կատարվում է լրացուցիչ գրառում. Հետագա իրացման համար: Այս ապրանքների համար ազատ առևտրի ռեժիմը տրամադրվում է Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների միջև դրանց սպառման մասին պայմանագիրը կնքելուց հետո՝ սույն Կանոնների 5.1 կետի դրույթներին համապատասխան, եթե Համաձայնագրի մասնակից պետության ազգային օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված:

8.7. Համաձայնագրի մասնակից պետությունների շրջանակներում՝ մինչև 1993 թվականի սեպտեմբերի 24-ի ապրանքների ծագման երկրի որոշման Կանոնների ուժի մեջ մտնելը, իրենց տարածքում արտադրված և Համաձայնագրի մասնակից պետությունների մաքսային տարածքներ ներմուծված (տեղաբաշխված) ապրանքների տեղաշարժման ժամանակ հնարավոր է CT-1 ձևի հավաստագրի տրամադրումը՝ 5-րդ սյունակում հետևյալ գրառում անելով. Ապրանքը արտադրված է (նշվում է երկրի ներկայիս անվանումը, արտադրողի անվանումը և արտադրման տարեթիվը): Այս դեպքում հավաստագրի 9-րդ սյունակում դրվում է գծիկ, իսկ 13-րդ սյունակում նշվում է երկրի ներկայիս անվանումը, որի տարածքում արտադրված է ապրանքը: Հավաստագրի տրամադրումը հնարավոր է Համաձայնագրի մասնակից պետություններից յուրաքանչյուրում՝ ապրանքը

արտադրողի (անվանումը, հասցեն, ինչպես նաև արտադրման տարեթիվը) մասին հավաստող փաստաթղթի ներկայացման պայմանով:

Բաժին 9

CT-1 ձևի հավաստագիրը չճանաչելու հիմքերը

9.1. Ապրանքներին ազատ առևտրի ռեժիմի տրամադրման նպատակով ներմուծող երկրի մաքսային մարմինների կողմից հավաստագիրը կարող է չճանաչվել այն դեպքերում, եթե`

ներկայացված փաստաթղթում առկա են ջնջումներ, կամ սույն Կանոններին համապատասխան չհաստատված ուղղումներ, կամ բացակայում են անհրաժեշտ ստորագրությունները և/կամ կնիքները, հավաստագրում նշված կնիքների արտատիպերը և/կամ անձանց ստորագրությունները, ինչպես նաև այն մարմինների հասցեները, որոնք լիազորված են կնքել և տրամադրել CT-1 ձևի հավաստագրերը չեն համապատասխանում այն տեղեկատվությանը, որը առկա է ներմուծող երկրի մաքսային ծառայությունում, հավաստագրում նշված տեղեկությունները չեն համապատասխանում հայտարարագրվող տեղեկություններին կամ չեն թույլ տալիս կատարել ապրանքի միանշանակ նույնացում` հայտարարագրվող ապրանքի հանդեպ, տրամադրված հավաստագրի ձևաթուղթը չի համապատասխանում ձևաթղթերի նմուշներին, որոնք առկա են ներմուծող երկրի մաքսային ծառայությունում, տրամադրված հավաստագրում հավաստագրերը հավաստող լիազոր անձի ստորագրությունը կատարված է ֆակսիմիլի տեսքով,

հավաստագրում նշված ապրանքը չի համապատասխանում սույն Կանոնների 5.1 կետով նախատեսված պայմաններին,

հավաստագրում նշված ապրանքը վերաբերում է սույն Կանոնների 5.2 կետով նախատեսված դեպքին:

9.2. CT-1 ձևի հավաստագիրը, որը չի ճանաչվում ներմուծող երկրի մաքսային մարմինների կողմից, կարող է հետագայում նրանց կողմից ճանաչվել` CT-1 ձևի հավաստագիրը տրամադրող լիազոր մարմնի համապատասխան գրության հիման վրա` հավաստագրում նշված տեղեկությունների ճշգրտմամբ:

Անհրաժեշտության դեպքում ներմուծող երկրի մաքսային մարմինների կողմից չճանաչված հավաստագրի փոխարեն կարող է տրամադրվել նոր հավաստագիր` սույն Կանոններով սահմանված կարգով:

9.3. Ներմուծող երկրի մաքսային մարմինների կողմից հավաստագիրը կարող է չճանաչվել, եթե`

6 ամիս գումարային ժամկետի ընթացքում (3 ամիս առաջնային հարցման օրվանից և 3 ամիս կրկնակի հարցման օրվանից) ներմուծող երկրի մաքսային մարմինները չեն ստացել պատասխան` խնդրարկվող հավաստագրի մասին արտահանող երկրի կամ ապրանքի ծագման երկրի իրավասու մարմինների կողմից,

Ներմուծող երկրի մաքսային մարմիններում առկա է արտահանող երկրի իրավասու մարմիններից ճշտված տեղեկություններ այն մասին, որ հավաստագիրը չի տրամադրվել (կեղծված է) կամ տրամադրված է անվավեր փաստաթղթերի և/կամ ոչ հավաստի տեղեկությունների հիման վրա,

Ներմուծող երկրի մաքսային մարմինների կողմից կատարված հետազոտությունների արդյունքներով և արտահանող կամ ապրանքի ծագման երկրի իրավասու մարմիններին ուղարկված հարցմամբ ստացված տեղեկատվության հիման վրա, ներմուծող երկրի մաքսային մարմինների կողմից բացահայտված է, որ CT-1 ձևի հավաստագիրը տրամադրված է սույն կանոններով սահմանված պահանջների խախտմամբ:

Բաժին 10

Եզրափակիչ դրույթներ

10.1. Ապրանքի ծագման ճիշտ ձևակերպված հավաստագրի կամ ապրանքի ծագման մասին տեղեկության չտրամադրելը հիմք չի հանդիսանում մաքսային մարմինների կողմից ապրանքի բաց թողումը ձգձգելու համար՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրությամբ:

10.2. Համաձայնագրի մասնակից պետության մաքսային մարմնի կողմից կարող է մերժվել ապրանքի բացթողումը միայն բավարար հիմքերի առկայության դեպքում, կարծելու, որ ապրանքը ծագում է այն երկրից, որի ապրանքները չեն ենթարկվում ներմուծող երկիր բացթողմանը՝ այդ պետության համար գործող միջազգային պայմանագրերի կամ ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հավելված 1
Ապրանքների ծագման երկրի
որոշման կանոնների

Ց Ա Ն Կ

Պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների՝ որոնց կատարման դեպքում ապրանքը համարվում է ծագած այն երկրից, որտեղ դրանք տեղի են ունեցել [3]

Ծանոթություն 1

1.1. Սույն Ցանկի առաջին երկու սյունակներում նշվում են ապրանքի մասին տվյալներ՝ ստացված նյութերի մշակման/վերամշակման արդյունքում: Ցանկի առաջին սյունակում նշվում է արտադրանքի ԱՏԳ ԱԱ ծածկագիրը, երկրորդում՝ արտադրանքի նկարագիրը՝ առաջին սյունակում նշված ծածկագրին համապատասխան: Առաջին

երկու սյունակներում նկարագրված յուրաքանչյուր արտադրանքի համար պայմանները, արտադրական և տեխնոլոգիական գործողությունները, որոնք որոշում են դրա ծագումը (այնուհետ՝ պայմաններ և գործողություններ), նշված են երրորդ սյունակում:

Սույն ցանկում նշված ապրանքները որոշվում են բացառապես ապրանքի ԱՏԳ ԱԱ ծածկագրով: Ապրանքի անվանումը բերված է միայն օգտագործման հարմարության համար:

Եթե ապրանքի ԱՏԳ ԱԱ ծածկագրից հետո դրվում է «-ից», ապա դա նշանակում է, որ երրորդ սյունակում նշված պայմանները և գործողությունները վերաբերում են միայն այն ապրանքներին, որոնք դասակարգվում են տվյալ ապրանքային դիրքում և նշված են երկրորդ սյունակում: Այդ դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել նաև ապրանքի անվանումով:

1.2. Եթե առաջին սյունակում նշված են մի քանի ապրանքային դիրքերի համարներ, կամ ապրանքախմբի համարը և դրա հետ միասին երկրորդ սյունակում տրված է արտադրանքների ամփոփ նկարագիրը, ապա երրորդ սյունակում նշված համապատասխան պայմանները և գործողությունները կիրառվում են բոլոր արտադրանքների հանդեպ, որոնք դասակարգվում են առաջին սյունակում նշված ԱՏԳ ԱԱ ապրանքային դիրքերին, կամ ապրանքային դիրքերից յուրաքանչյուրին համապատասխան:

1.3. Եթե միևնույն ապրանքային դիրքում դասակարգվող ապրանքների մի մասի նկատմամբ կիրառվում են նույն պայմանները և գործողությունները, իսկ մյուս մասի (մասերի) նկատմամբ կիրառվում են այլ պայմաններ և գործողություններ, ապա երկրորդ սյունակում առկա են համապատասխան քանակությամբ պարբերություններ, որոնցում նշվում է ապրանքների հստակ նկարագիրը և համապատասխանաբար երրորդ սյունակում նշվում են պայմանները և գործողությունները, որոնք վերաբերում են այն ապրանքներին, որոնց նկարագիրը նշված է երկրորդ սյունակի այս կամ այն պարբերությունում:

Ծանոթություն 2

2.1. Սույն Ցանկի երրորդ սյունակում նշված պայմանները և գործողությունները պետք է իրականացվեն միայն ապրանքի պատրաստման համար օգտագործվող արտասահմանյան ծագում ունեցող նյութերի նկատմամբ: Երրորդ սյունակում պայմաններով և գործողություններով սահմանված սահմանափակումները նույնպես տարածվում են միայն ապրանքի պատրաստման համար օգտագործվող արտասահմանյան ծագում ունեցող նյութերի նկատմամբ:

2.2. Եթե պայմաններով և գործողություններով սահմանված է, որ արտադրանքի արտադրության մեջ կարող են օգտագործված լինել ցանկացած ապրանքային դիրքերի նյութեր, ապա դա նշանակում է, որ արտադրանքի հետ նույն ապրանքային դիրքում դասակարգվող նյութերը նույնպես կարող են օգտագործվել հատուկ սահմանափակումների պահպանելու պայմանով, որոնք կարող են որոշվել պայմաններով և գործողություններով:

2.3. Այն դեպքում եթե ապրանքը՝ պատրաստված արտասահմանյան ծագում ունեցող նյութերից, ստանում է Համաձայնագրի անդամ երկրից ծագածի կարգավիճակ, որտեղ կատարվում է նրա վերամշակումը՝ ապրանքային

դիրքի փոփոխման կամ Ցանկին համապատասխան իրեն վերաբերող հատուկ պայմանների կամ գործողությունների առումով, և հետո օգտագործվում է որպես այլ ապրանքի արտադրության համար նախատեսված նյութ, ապա պայմանները և գործողությունները, որոնք կիրառվում են ապրանքի նկատմամբ, որի պատրաստման համար այն օգտագործվում է դրա հանդեպ չեն կիրառվում:

2.4. Արտադրանքը, որը կազմված է էլեմենտների խմբից կամ մի շարք մասերից և ԱՏԳ ԱԱ ապրանքների դասակարգման կանոններին համապատասխան դասակարգվում է որպես միասնական ապրանք, պետք է դիտարկվի որպես պայմաններին և գործողություններին բավարարող, եթե բոլոր նրա բաղադրիչները բավարարում են այդ պայմաններին և գործողություններին:

Եթե նշված ապրանքի բաղադրիչներից մի մասը բավարարում է, իսկ մյուս մասը չի բավարարում պայմաններին և գործողություններին կամ ունի վերջնական արտադրանքի հետ նույն ապրանքային դիրք, ապա տվյալ ապրանքը պետք է համարվի պայմաններին և գործողություններին բավարարող այն դեպքում, եթե բաղադրիչների, որոնք չեն համապատասխանում պայմաններին և գործողություններին կամ վերջնական ապրանքի նույն ապրանքային դիրքին, արժեքը չի գերազանցում վերջնական արտադրանքի ֆրանկո գործարանի գնի 15%-ը:

Նշված կանոնը կարող է կիրառվել բոլոր դեպքերում՝ բացառությամբ այն ապրանքների, որոնց համար սույն Ցանկում նշված է այլ պայման:

2.5. Պայմանները և գործողությունները, որոնք նշված են սույն Ցանկի երրորդ սյունակում, սահմանում են արտադրական կամ տեխնոլոգիական գործողությունների կատարման նվազագույն ծավալը: Սահմանված արտադրական կամ տեխնոլոգիական գործողությունների ավելի քիչ ծավալով կատարումը չի որոշում ապրանքի ծագումը:

2.6. Այն դեպքում եթե սույն Ցանկում նշված պայմաններով և գործողություններով սահմանված է, որ արտադրանքը կարող է պատրաստված լինել մեկից ավելի նյութերից, դա նշանակում է, որ կարող է օգտագործվել մեկ նյութ կամ ավելին: Այդ դեպքում պարտադիր չէ, որ օգտագործվեն բոլոր նյութերը:

Սակայն, եթե մեկ պայմանի կամ գործողության շրջանակներում առկա է որևէ սահմանափակում՝ սահմանված մեկ նյութի նկատմամբ և դրա հետ միաժամանակ այլ սահմանափակումներ՝ սահմանված այլ նյութերի նկատմամբ, ապա նշված սահմանափակումները կիրառվում են միայն այն նյութերի նկատմամբ, որոնք իրականում օգտագործվել են ապրանքի պատրաստման ժամանակ:

2.7. Այն դեպքում եթե սույն ցանկում նշված պայմաններով և գործողություններով սահմանված է, որ ապրանքը պետք է պատրաստվի հատուկ նյութից, դա նշանակում է, որ նշված պայմանը խոչընդոտ չի հանդիսանում այլ նյութերի օգտագործման համար, որոնք իրենց բնական ծագումով չեն կարող խախտել նշված պայմանների կամ գործողությունների դրույթները: (Օրինակ՝ եթե պայմաններով և գործողություններով հատուկ վերապահում է արվում հացահատիկների կամ դրանց ածանցյալների օգտագործումը, դա չի խոչընդոտում հանքային աղերի,

քիմիական և այլ հավելումների օգտագործմանը, որոնք չեն արտադրվում հացահատիկեղենից):

Ծածկագիր ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքի անվանումը	Պայմաններ, արտադրական և տեխնոլոգիական գործողություններ, որոնք անհրաժեշտ են երրորդ երկրների միջոցով արտադրված ապրանքներին ծագման կարգավիճակ տրամադրելու համար
0201	Խոշոր եղջերավոր անասունի միս՝ թարմ կամ կիսասառեցված	Պատրաստում 01 խմբի ապրանքներից
0202	Խոշոր եղջերավոր անասունի միս՝ սառեցված	Պատրաստում 01 խմբի ապրանքներից
0206	Խոշոր եղջերավոր անասունի, խոզի, ոչխարի, այծի, ձիու, ավանակի, ջորու մսամթերք՝ թարմ, կիսասառեցված կամ սառեցված (սառցապատած)	Պատրաստում բոլոր դիրքերի նյութերից, բացի 0206 դիրքից և 0201-0205 00 դիրքերի ոսկորներից
0207	0105 ապրանքային դիրքում նշված միս և ընտանի թռչնի մսամթերք՝ թարմ, կիսասառեցված կամ սառեցված	Պատրաստում բոլոր դիրքերի ապրանքներից, բացառությամբ՝ 0207
0209	Խոզի ճարպ՝ առանձնացրած անյուղ մսից և ընտանի թռչունների ճարպ՝ չհալեցրած կամ այլ եղանակով չառանձնացրած, թարմ, պաղեցրած, սառեցրած, աղի, աղաջրի մեջ դրած, չորացրած կամ ապխտած	Պատրաստում ցանկացած դիրքերի նյութերից՝ տեխնոլոգիական գործողությունների իրականացմամբ, բացառությամբ՝ աղադրման, ապխտման հեղուկով վերամշակման, կտրատման, համեմունքներով և/կամ բուսական

		սպիտակուցներով խառնման գործողությունների
0210	Միս և մսամթերք՝ աղադրած, աղաջրի մեջ, չորացրած կամ Ապխտած, մսի կամ մսամթերքի մանր կամ խոշոր աղացած ալյուր	Պատրաստում ցանկացած դիրքերի նյութերից, բացառությամբ՝ 0201-0206 և 0208 դիրքերի մսից և մսամթերքից կամ 0207 դիրքի թռչնի լյարդից՝ տեխնոլոգիական գործողությունների իրականացմամբ, բացառությամբ՝ ոսկրահանման, ջլահանման, կտրատման, համեմունքների և/կամ բուսական սպիտակուցների, և/կամ աղի հետ խառնելու, ներարկման մեթոդով մսի աղադրման, չոսկրահանված մսի մասերի բաժանման, ընտանի թռչնի մսի մեխանիկական ոսկրահանմանը պատրաստման, ինչպես նաև ապխտման հեղուկով մշակման
0402	Կաթ և սերուցք՝ խտացրած կամ շաքարի կամ այլ քաղցրացնող բաղադրիչների ավելացումով	Պատրաստում ցանկացած դիրքերի նյութերից: Սակայն պատրաստի արտադրանքի հետ միևնույն դիրքի օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի պատրաստի

		արտադրանքի վերջնական գնի 40%-ը:
0408	Առանց կեղևի թռչնի ձու և ձվի դեղնուց՝ թարմ, չորացրած, գոլորշու կամ եռացող ջրի մեջ խաշած, կաղապարված, սառեցրած կամ այլ եղանակով պահածոյացված, առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի ավելացումով կամ չավելացումով	Պատրաստում բոլոր դիրքերի նյութերից, բացառությամբ՝ 0407 00 դիրքի թռչունների ձվերի
0506	Ոսկորներ և եղջյուրե ձող, անմշակ, յուղագերծված, առաջնային մշակման ենթարկված (առանց ձև տալու), թթվով մշակված կամ այս արտադրանքների փոշի կամ մնացորդները	Պատրաստում, որի ժամանակ օգտագործվում են 02 խմբի նյութեր
071040000	Քաղցր եգիպտացորեն (հում կամ եփած ջրում կամ շոգեխաշած), սառեցրած	Պատրաստում քաղցր եգիպտացորենից՝ թարմ կամ սառեցրած
071190300	Քաղցր եգիպտացորեն պահածոյացված կարճաժամկետ պահպանման համար, բայց այդ վիճակում սննդի մեջ անմիջապես կիրառման համար ոչ պիտանի	Պատրաստում քաղցր եգիպտացորենից՝ թարմ կամ սառեցրած
0901-ից	Սուրճ բոված, կոֆեինով կամ առանց կոֆեինի, սուրճի փոխարինիչներ՝ սուրճի պարունակությամբ ցանկացած համամասնություններով	Պատրաստում բոլոր ապրանքային դիրքերի նյութերից՝ բովման և բաղադրատոմսերը կազմելու տեխնոլոգիական

		գործողությունները կատարելու պայմանով
0902	Թեյ՝ համեմունքային հավելումներով կամ առանց դրանց	Պատրաստում 0902 դիրքի նյութերից՝ կուպաժային խառնուրդի և բաղադրատոմսերը կազմելու տեխնոլոգիական գործողությունները կատարելու պայմանով, սակայն բոլոր օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը:
110610000	Ալյուր մանր և խոշոր աղացվածքի և 0713 ապրանքային դիրքում նշված փոշի՝ չորացրած լոբազգի բանջարեղեններից	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքերի նյութերից, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը:
1301	Ղոճխեժ բնական չմաքրած, բնական բուսախեժեր, խեժեր, սոսնձախեժեր, բեկնախեժ (օրինակ բալզամ)	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքերի նյութերից, որի ժամանակ 1301 դիրքից օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը:
150100-ից	Ոսկրային յուղ կամ յուղ՝ մնացորդներից ստացված	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքերի նյութերից, բացառությամբ՝ 0203, 0206 կամ 0207, կամ 0506 դիրքերի նյութերից,

		պատրաստում 0203 կամ 0206 դիրքերի խոզի մսից կամ մսամթերքից, կամ 0207 դիրքի թռչնի մսից կամ մսամթերքից
150200-ից	Ոսկրային յուղ կամ յուղ՝ մնացորդներից ստացված	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքերի նյութերից, բացառությամբ՝ 0201, 0202, 0204 կամ 0206, կամ 0506 դիրքերի նյութերից
1504- 1506 00 000	Ձկան կամ ծովային կաթնասունների յուղեր, ձեթեր և դրանց ֆրակցիաներ, չզտված կամ զտված, բայց առանց քիմիական բաղադրության փոփոխման. ճարպաքրտինք և ճարպային նյութեր դրանցից ստացված (ներառյալ լանոլինը՝ բրդաճարպ). այլ կենդանական յուղեր, ձեթեր և դրանց ֆրակցիաներ չզտված կամ զտված, բայց առանց քիմիական բաղադրության փոփոխման	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքերի նյութերից՝ հետևյալ տեխնոլոգիական գործողությունների կատարման պայմանով. - հալեցում, - գոլորշացում, - մաքրում
1507-1515-ից	Բուսական ձեթեր զտված, չզտված կամ զտված բուսական ձեթերի ֆրակցիաներ, բայց առանց քիմիական բաղադրության փոփոխման	Ջտման և/կամ թորման գործողություններ մասնագիտացված արտադրության պայմաններում, ընդ որում հիդրատացման առանձին գործողությունը բավարար չի համարվում ապրանքին ծագման կարգավիճակ

		տալու համար
1602	Մսից, մսամթերքից կամ արյունից պատրաստի կամ պահածոյացված ապրանքներ այլ	Պատրաստում 02 խմբի նյութերից՝ տեխնոլոգիական գործողությունները իրականացնելիս, բացառությամբ մասնատման, ոսկրահանման, ջլահանման, կտրատման, խառնելու, այդ թվում՝ ընտանի թռչունների մեխանիկական ջլահանման, համեմունքներով և/կամ բուսական սպիտակուցներով և/կամ աղի հետ խառնելու, ներարկման մեթոդով մսի աղադրման, չոսկրահանված մսի մասերի բաժանման, ինչպես նաև ընտանի թռչնի մսի մեխանիկական ոսկրահանման պատրաստման գործողություններ
1701	Շաքար՝ շաքարեղեգի կամ շաքարի ճակնդեղի և քիմիապես մաքուր սախարոզա, կարծր վիճակում	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից զտման (շաքարեղեգի շաքարի), կրազտման, ֆիլտրման և այլ հաջորդող տեխնոլոգիական գործողությունների կատարման պայմանով (շաքարեղեգի կամ շաքարի

		ճակնդեղի շաքարի համար)
1702 50 000, 1702 90 100	Ֆրուկտոզա՝ քիմիապես մաքուր, մալտոզա՝ քիմիապես մաքուր	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից, այդ թվում 1702 դիրքի այլ նյութերից
1806	Շոկոլադե և այլ պատրաստի սննդի արտադրանք՝ կակաո պարունակող	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից: Սակայն պատրաստի արտադրանքի դիրքի նույն ապրանքային դիրքին դասվող՝ օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը:
1905	Հաց, այլուրից հրուշակային արտադրանք, հրուշակներ, թխվածքաբլիթներ և այլ հացաբուլկեղեն այլուրից հրուշակային արտադրանք, կակաո պարունակող կամ չպարունակող, վաֆլե շերտեր, դատարկ կապսուլներ՝ բնական, դեղագործական նպատակներով օգտագործման համար, վաֆլե պատիճներ կնքման համար, բրնձի թուղթ և համանման արտադրանք	Պատրաստում, որի ժամանակ օգտագործվող բոլոր նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը:
2009	Մրգային հյութեր (ներառյալ խաղողի քաղցրահյութ) և հյութեր բանջարեղենի, չխմորված և սպիրտային հավելումներ	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից: Սակայն պատրաստի արտադրանքի

	<p>չպարունակող, շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելումով կամ չհավելած</p>	<p>դիրքի նույն ապրանքային դիրքին դասվող՝ օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը և կատարելով՝ բացի վերականգնումից, այնպիսի տեխնոլոգիական գործողություններ, ինչպիսիք են կուպաժը (բազմատարր հյութերի համար), համասեռացումը (պտղամիս պարունակող հյութերի համար), օդազերծումը, ջերմամշակումը (պաստերացում, ստերիլիզացում) և այլ</p>
<p>2101 11-ից</p>	<p>Լուծվող սուրճ</p>	<p>Պատրաստում 0901 և 2101 11 դիրքի նյութերից հիմնական տեխնոլոգիական պրոցեսների համակարգի իրականացման պայմանով. բովում, մանրացում, լուծահանում, խտացում (կամ չորացում): Ընդ որում պատրաստի արտադրանքի դիրքի նույն ապրանքային դիրքին դասվող՝ օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական</p>

		արտադրանքի գնի 50%-ը:
2101 12	Պատրաստի ապրանքներ էքստրակտների, էսենցիայի կամ սուրճի խտանյութերի հիման վրա, կամ սուրճի հիման վրա	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից: Սակայն պատրաստի արտադրանքի դիրքի նույն ապրանքային դիրքին դասվող՝ օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը:
2101 30 910	էքստրակտներ, էսենցիա և տապակած ճարձատուկի խտանյութ	Պատրաստում հիմնական տեխնոլոգիական գործողությունների իրականացման պայմանով՝ մանրացում, լուծահանում կամ խտացում
2103 30 900	Մանանեխ պատրաստ	Պատրաստում մանանեխի փոշուց
2106-ից	Շաքարահյութեր՝ համեմունքային կամ ներկող հավելումներով	Պատրաստում, որի ժամանակ օգտագործվող բոլոր նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը:
2106 90 200	Սպիրտային կիսապատրաստուկներ, բացի հոտավետ նյութերի հիմքով արտադրանքից՝ խմիչքների արտադրության համար օգտագործվող	Պատրաստում, որի ժամանակ օգտագործվող բոլոր նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը:

2202 90 100-ից	Նեկտարներ	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից: Սակայն պատրաստի արտադրանքի դիրքի նույն ապրանքային դիրքին դասվող՝ օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը և կատարելով այնպիսի տեխնոլոգիական գործողություններ, ինչպիսիք են կուպաժը (բազմատարր հյութերի համար), համասեռացումը (պտղամիս պարունակող նեկտարների համար), օդազերծումը, ջերմամշակումը (պաստերացում, ստերիլիզացում) և այլ, բացի վերականգնումից
2204	Խաղողի գինիներ բնական՝ ներառյալ ամրացվածը, խաղողահյութ, բացի 2009 ապրանքային դիրքում նշվածից	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից կուպաժի, ֆիլտրման և այլ հետագա տեխնոլոգիական գործողությունների կատարման պայմանով: Սակայն 2204 դիրքի օգտագործվող նյութերի արժեքը չպետք է

		գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը:
2205	Վերնուտներ և խաղողի բնական գինիներ այլ բուսական կամ հոտավետ նյութերի հավելումով	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից կուպաժի, ֆիլտրման և այլ հետագա տեխնոլոգիական գործողությունների կատարման պայմանով: Սակայն պատրաստի արտադրանքի դիրքի նույն ապրանքային դիրքին դասվող՝ օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը:
2206 00	Խմիչքներ այլ խմորված (օրինակ՝ սիդր, պերրի կամ տանձի սիդր, մեդրի ըմպելիք), խառնուրդներ խմորված ըմպելիքների և ոչ ալկոհոլային խմիչքների, այլ տեղում չհիշատակված կամ չներառված	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից՝ կուպաժի, ֆիլտրման, հետագա և այլ տեխնոլոգիական գործողությունների կատարման պայմանով
2208-ից	Խաղողի թորվածքներ, լիկյորներ, և այլ սպիրտային խմիչքներ՝ խաղողի թորվածքներ պարունակող, կոնյակ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից՝ կուպաժի, ֆիլտրման և այլ հետագա տեխնոլոգիական գործողությունների կատարման պայմանով: Սակայն պատրաստի արտադրանքի դիրքի նույն ապրանքային դիրքին

		դասվող՝ օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը
2309	Կենդանիների կերակրման համար օգտագործվող ապրանքներ	Պատրաստում, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը
2403 10	Ծխախոտ, ցանկացած համամասնությամբ ծխախոտի փոխարինիչներ պարունակող կամ չպարունակող	Պատրաստում ցանկացած ապրանքային դիրքի նյութերից: Սակայն 2403 ապրանքային դիրքից օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը
25 խմբից	Աղ, ծծումբ, հող կամ քար, սվաղային նյութեր, կիր և ցեմենտ, բացի 2504, 2515 12 500, 2516, 2518, 2 519-ից, 2524-ից, 2525-ից դիրքի դասվող ապրանքներից, որոնց համար կիրառվող կանոնները շարադրվում են հետագայում	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից՝ մասնագիտացված արտադրության պայմաններում՝ մշակման/վերամշակման, ածխով հարստացման, մաքրման, կոշտ բյուրեղով աղացման, կտրատման, կալցինացման տեխնոլոգիաներին համապատասխան
2504	Գրաֆիտ բնական	Ածխածնի պարունակության հարստացում, զտում և

		հունքի մանրացում
2515 12 500	Մարմար և տրավերտին կամ կրային տուֆ՝ սղոցված կամ այլ եղանակով բաժանված բլոկերի կամ ուղղանկյուն սալերի (ներառյալ քառակուսի) ձևերի, 4սմ-ից ավելի, բայց 25 սմ չգերազանցող լայնությամբ:	Սղոցում կամ այլ եղանակով 25 սմ հաստությամբ քարե բլոկերի բաժանում
2516	Գրանիտ, ծիրանաքար, բազալտ, ավազաքար և քար հուշարձանների կամ շինարարության համար այլ, կոպիտ կոտրած կամ չկոտրած, սղոցված կամ չսղոցված կամ բաժանված այլ եղանակով բլոկերի կամ սալերի՝ ուղղանկյուն (ներառյալ քառակուսի) ձևերի	Սղոցում կամ այլ եղանակով քարե բլոկերի բաժանում
2518	Դոլոմիտ՝ կալցինացված կամ չկալցինացված, եռակալված կամ չեռակալված, ներառյալ դոլոմիտ՝ մեծ կտորներով ջարդած կամ սղոցված կամ բաժանված այլ եղանակով բլոկերի կամ սալերի՝ ուղղանկյուն (ներառյալ քառակուսի) ձևերի, դոլոմիտային խժուժման խառնուրդ	Ջարդում, սղոցում, մանրացում, չկալցինացված դոլոմիտի համար՝ կալցինացում
2519-ից	Մագնեզիումի կարբոնատ բնական (մագնեզիտ)՝ ջարդած և տեղադրված հերմետիկ փակ	Պատրաստում, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը

	տարայի մեջ, մագնեզիումի օքսիդ, բացի էլեկտրահալված մագնեզիումի օքսիդից և մինչև եռակալման աստիճանը թրծած մագնեզիումի օքսիդից	պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում, բացի բնական մագնեզիումի կարբոնատից (մագնեզիտ)
2524	Ասբեստ	Պատրաստում (0-6) ասբեստի ասբեստային հանքանյութից
2525	Փայլար, այդ թվում շերտատած, փայլարի թափոններ	Ճեղքում, հատում, մանրատում
2707 50 100	Արոմատիկ ածխաջրածինների խառնուրդներ այլ, որոնց 65 կամ ավելի ծավ. % (ներառյալ կորուստները) թորվում է 250°C-ում ASTM D 86 մեթոդով որպես վառելանյութ օգտագործելու համար	Ջտման գործողություններ և/կամ մեկ կամ մի քանի որոշակի մշակումներ: Այլ գործողություններ, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն կարող է օգտագործվել մեկ արտադրանքի հետ միևնույն դիրքի նյութ, պայմանով, որ դրա արժեքը չի գերազանցում վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2709 00	Նավթ և նավթամթերք հում, ստացված բիտումինոզային հանքատեսակներից	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից՝ բիտումինոզային նյութերի թորման և բիտումինոզային միներալների դեստրուկտիվային թորման տեխնոլոգիական

		գործողությունների կատարման պայմանով
2710-ից	Նավթ և նավթամթերք, ստացված բիտումինոզային հանքատեսակներից ստացված, բացի հում հանքատեսակներից՝ այլ տեղում չհիշատակված կամ չներառված, 70 ծավ. % կամ ավելի նավթ կամ նավթամթերք պարունակող, ստացված բիտումինոզային տեսակներից, ընդ որում այս նավթամթերքները հանդիսանում են արտադրանքների հիմնական բաղադրամասերը	Գործողություններ գտման և/կամ մեկ կամ մի քանի որոշակի մշակումներ: Այլ գործողություններ, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, պատրաստվածքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չի գերազանգի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2711	Գազեր նավթային և ածխաջրածիններ գազանման այլ	Գործողություններ գտման և/կամ մեկ կամ մի քանի որոշակի մշակումներ: Այլ գործողություններ, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ

		նրանց արժեքը չգերազանգի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2712	Վազելին նավթային, պարաֆին, մոմ նավթի միկրոբյուրեղային, նստվածք պարաֆինի, օզոկերիտ, մոմ հորատաածխային, մոմ տորֆի, այլ հանքային մոմեր և համանման արտադրանքներ՝ ստացված սինթետիկ և այլ պրոցեսների արդյունքում, ներկված կամ առանց ներկելու	Գործողություններ գտնան և/կամ մեկ կամ մի քանի որոշակի մշակումներ: Այլ գործողություններ, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, պատրաստվածքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանգի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2713	Կոքս նավթի, բիտում նավթի և նավթի կամ նավթամթերքների մշակումից բիտումինոզային տեսակներից ստացված այլ մնացորդներ	Գործողություններ գտնան և/կամ մեկ կամ մի քանի որոշակի մշակումներ: Այլ գործողություններ, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, պատրաստվածքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ

		դրանց արժեքը չգերազանգի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2714	Բիտում և ասֆալտ, բնական՝ թերթաքարեր բիտումինոզային կամ նավթաբեր և ավազաքարեր բիտումինոզային, ասֆալտիդներ և ասֆալտի տեսակներ	Գործողություններ գտման և/կամ մեկ կամ մի քանի որոշակի մշակումներ: Այլ գործողություններ, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, պատրաստվածքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ նրանց արժեքը չգերազանգի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2715 00 000	Բիտումային խառնուրդներ բնական ասֆալտի, բնական բիտումի, նավթային բիտումի, հանքային ձյութի հիմքի վրա կամ հանքային ձյութերի (օրինակ՝ բիտումային մաստիկա, ճանապարհային պատվածքի համար խառնուրդներ)	Գործողություններ գտման և/կամ մեկ կամ մի քանի որոշակի մշակումներ: Այլ գործողություններ, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, պատրաստվածքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ

		դրանց արժեքը չգերազանգի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
28 խմբից	Արտադրանք անօրգանական քիմիայի, թանկարժեք մետաղների օրգանական և անօրգանական միացություններ, հազվագյուտ մետաղների, ռադիոակտիվ տարրերի և իզոտոպների, բացի 2811 29 100, 2818 20 000, 2821 20 000, 2833 22 000 ենթադիրքի ապրանքներից, որոնց համար կիրառվող կանոնները շարադրվում են այնուհետ	Պատրաստում, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, պատրաստվածքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանգի վերջնական արտադրանքի գնի 20 %-ը
2811 29 100-ից	Ծծմբի օքսիդ (VI) (ծծմբի անհիդրիդ)	Պատրաստում ծծմբի երկօքսիդից
2818 20 000	Ալյումինիումի օքսիդ՝ արհեստական կորունդից տարբերվող	Պատրաստում ցանկացած դիրքի նյութից՝ մասնագիտացված արտադրության պայմաններում՝ տեխնոլոգիական մշակմանը) վերամշակմանը համապատասխան
2821 20 000	Հանքային ներկանյութեր	Թրծում և հողային ներկերի աղում
2833 22 000	Ալյումինի սուլֆատ	Պատրաստում, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերի արժեքը չպետք է

		գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2844 10	Բնական ուրան և նրա միացություններ	Պատրաստում (ուրան-235 իզոտոպով հարստացում) նյութերից (ուրան՝ աղքատացված ուրան 235-ով և նրա միացությունները) մասնագիտացված արտադրության պայմաններում՝ տեխնոլոգիական վերամշակմանը համապատասխան
2844 20-ից	Ուրան՝ հարստացված ուրան-235-ով և նրա միացությունները	Պատրաստում (ուրան-235 իզոտոպով հարստացում) 2844 10 և 2844 30 դիրքերի նյութերից (ուրան՝ աղքատացված ուրան 235-ով և նրա միացությունները) մասնագիտացված արտադրության պայմաններում՝ տեխնոլոգիական վերամշակմանը համապատասխան
29 խմբից	Քիմիական օրգանական միացություններ, բացառությամբ՝ 2901-ից, 2902-ից, 2905 19 000-ից, 2915, 2932 99 700, 2932 99 850-ից, 2933, 2934 դիրքերի միացություններից, որոնց համար օգտագործվող կանոնները	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն,

	շարադրվում են այնուհետ	արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ նրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2901-ից	Ացիկլային ածխաջրածիններ, որպես վառելիք կամ վառելանյութ օգտագործման համար	Ջտման և/կամ մեկ կամ մի քանի որոշակի մշակման գործողություններ: Այլ գործողություններ, որոնց ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2902-ից	Ցիկլաններ, ցիկլեններ /բացառությամբ՝ ազուլենից/, բենզոլ, տոլուոլ, քսիլոլ, որոնք նախատեսված են որպես վառելիք կամ վառելանյութ օգտագործման համար	Ջտման և/կամ մեկ կամ մի քանի որոշակի մշակման գործողություններ: Այլ գործողություններ, որոնց ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն,

		արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
290519 000-ից	Մետաղի ալկոհոլատներ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից՝ այդ թվում 2905 դիրքի այլ նյութերից: Սակայն այս դիրքի մետաղի ալկոհոլատները կարող են օգտագործվել, եթե դրանց արժեքը չի գերազանցում վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2915	Թթուներ ացիլլային մոնոկարբոնային հագեցած և նրանց անհիդրիդներ, հալոգենանհիդրիդներ, պերօքսիդներ և պերօքսիթթուներ, նրանց հալոգենացված, սուլֆացված, նիտրացված և նիտրոնացված ածանցյալներ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից: Սակայն 2915 կամ 2916 դիրքերից օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2932 99 700	Այլ պարբերական ացետալներ և ներքին կիսաացետալներ, որոնք պարունակում են կամ չեն պարունակում այլ թթվածին պարունակող ֆունկցիոնալ խումբ և իրենց հալոգենացված, սուլֆացված, նիտրացված և	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից՝ այդ թվում 2932 դիրքի այլ նյութերից

	նիտրոնացված ածանցյալներ	
2932 99 850-ից	Ներքին պարզ եթերներ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից: Սակայն 2909 դիրքից օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2933	Միայն ազոտի հետերատոմ (հետերատոմներ) պարունակող հետերոցիկլիկ միացություններ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից: Սակայն 2932 կամ 2933 դիրքերից օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
2934	Նուկլեինաթթուներ և դրանց աղեր՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության, հետերոցիկլիկ միացություններ, այլ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից: Սակայն 2932, 2933 կամ 2934 դիրքերից օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 20 %-ը
30 խմբից	Ղեղազործական արտադրանք, բացառությամբ՝ 3002, 3003, 3005 և 3006 60 դիրքերի արտադրանքից, որոնց համար օգտագործվող կանոնները ներկայացված են այնուհետ	Պատրաստում, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ

		նրանց արժեքը չգերազանգի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
3002	Մարդկային արյուն, կենդանական արյուն՝ պատրաստված բուժական, կանխարգելիչ և ախտորոշման նպատակներով օգտագործելու համար, վարակամերժ (իմունային) շիճուկներ (հակաշիճուկներ), արյան այլ թորամասեր և փոփոխված վարակամերժ (իմունոլոգիական) նյութեր, այդ թվում՝ ստացված բիոտեխնոլոգիական ճանապարհով, պատվաստանյութեր, թույներ, աճեցրած մանրէներ (բացի խնորասուսուկերից) և համանման նյութեր	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից՝ այդ թվում 3002 դիրքի այլ նյութերից: Սակայն 3002 դիրքի նյութերը կարող են օգտագործվել, միայն այն պայմանով, երբ դրանց արժեքը չի գերազանցում վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
3003	Դեղագործական միջոցներ (բացի 3002, 3005 կամ 3006 ապրանքային դիրքերի արտադրանքից), որոնք բաղկացած են երկու կամ ավելի տարրեր պարունակող խառնուրդից պատրաստված բուժական կամ կանխարգելային նպատակներով օգտագործելու համար, բայց տարայավորված չեն բաժնավորիչ (չափաբաժնային)	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից: Սակայն 3003 դիրքի նյութերը կարող են օգտագործվել, միայն եթե դրանց արժեքը չի գերազանցում վերջնական արտադրանքի գնի 20 %-ը

	դեղագործական ձևով կամ փաթեթավորված մանրածախ առևտրի համար	
3005	Բամբակ, բժշկական թանգիֆ, վիրակապ և համանման ապրանքներ (օրինակ՝ վիրակապման նյութեր, կաշուն սպեղանիներ, թրջոցալաթեր)՝ ներծծված կամ պատված դեղագործական նյութերով, բաշխված և փաթեթավորված՝ մանրածախ առևտրի համար, նախատեսված բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության ոլորտներում օգտագործելու համար	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից՝ բացառությամբ դեղագործական նյութերից: Սակայն 3005 դիրքի օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը:
3006 60	Քիմիական հակաբեղմնավորիչ միջոցներ՝ ստացված հորմոնների, 2937 ապրանքային դիրքի միացություններից կամ սպերմիցիդների հիմքով	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը չպետք է գերազանցեն վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
31 խումբ	Պարարտանյութեր	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում:

		Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
32 խմբից	Դաբաղման կամ ներկման վերաբերյալ էքստրակտներ, աղաղներ և դրանց ածանցյալներ, ներկանյութեր, գունանյութեր և այլ ներկող նյութեր, ներկեր և լաքեր, մածիկ և այլ մաստիկներ, պոլիգրաֆիական ներկեր, թանաք, տուշ, բացի՝ 3201, 3205 00 000 դիրքի ապրանքներից, որոնց համար ընդունելի կանոնները ներկայացված են այնուհետ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 20 %-ը
3201-ից	Աղաղներ և դրանց աղեր բարդ և պարզ եթերներ և այլ ածանցյալներ	Պատրաստում բուսական ծագման դաբաղային նյութերի էքստրակտներից
3205 00 000	Գունավոր լաքեր, գունավոր լաքերի հիման վրա պատրաստուկներ, որոնք նշված են այս ապրանքային խմբի ծանոթագրություն 3-ում	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից, բացառությամբ՝ 3203 00 և 3204 դիրքերի նյութերից պայմանով, որ 3205 00 000 դիրքի բոլոր նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական

		արտադրանքի 20%-ը
33 խմբից	Եթերայուղեր և ռետինանյութեր, օժանելիքի կամ կոսմետիկական միջոցներ, բացի 3301 դիրքի ապրանքներից, որոնց համար ընդունելի կանոնները ներկայացված են այնուհետ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 40 %-ը
3301	Եթերայուղեր (տերպեններից ազատված կամ չազատված)՝ ներառյալ պինդ և բացարձակապես ծաղկային խտափայտները, ռետինանյութեր, լուծամզված եթերայուղեր, եթերայուղերի խտանյութեր ճարպերում, չցնդող յուղերի մեջ, մոմերի կամ համանման նյութերի մեջ, ստացված անֆլերաժի կամ թթամշակման մեթոդով, եթերայուղերի տերպենազերծումից ստացված տերպենային կողմնակի արգասիքներ, եթերայուղերի ջրային թորվածքներ և ջրային լուծույթներ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից՝ այդ թվում նույն դիրքի այլ նյութերից, արտադրության պայմաններում՝ տեխնոլոգիական մշակմանը և վերամշակմանը համապատասխան մաքրման հատուկ մեթոդների կիրառմամբ: Սակայն 3301 դիրքի օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
34 խմբից	Օճառ, մակերեսային-ակտիվ օրգանական նյութեր, լվացող միջոցներ, քսուքային նյութեր, արհեստական և պատրաստի մոմեր, մաքրող և փայլեցնող	Պատրաստում, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից

	<p>միջոցներ, մոմեր և համանման արտադրատեսակներ, ծեփվածքի համար նաժուկներ, պլաստիլին, ատամնաբուժական նպատակով օգտագործվող մոմեր և գիպսի հիման վրա, բացի 3403 դիրքի ապրանքներից և 3404-ից, որոնց համար ընդունելի կանոնները ներկայացված են այնուհետ</p>	<p>տարբեր դիրքում: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանգի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը:</p> <p>Օձառի համար:</p> <p>Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից հետևյալ տեխնոլոգիական օպերացիաների կիրառման պայմաններով.</p> <ul style="list-style-type: none"> • բաղադրատոմսով ձարպային հավաքում • օձառի եփում • օձառի հավաքում • սառեցում և չորացում • մեխանիկական վերամշակում • հավելանյութերի խառնում • կտրում • դրոշմում • փաթեթավորում
3403	<p>Քսանյութեր (ներառյալ քսասառեցնող էմուլսիաներ կտրող գործիքների համար, հեղույսների կամ պնդողակների պտուտակա-հանումը հեշտացնող միջոցներ, ժանգի վերացման կամ հակաքայքայիչ</p>	<p>Պատրաստում նույն ապրանքային դիրքի նյութերից, այն պայմանով, որ դրանց արժեքը չգերազանգի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը</p>

	<p>միջոցներ և արտադրատեսակը կադապարից դուրս հանելու համար քսանյութերի հիման վրա պատրաստված պատրաստուկներ) և միջոցներ, որոնք օգտագործվում են կաշվի, մանանագործվածքի, մորթու կամ այլ նյութերի յուղման կամ ճարպային վերամշակման համար, բացառությամբ այն նյութերի, որոնց հիմնական բաղադրիչները ներառում են 70 մաս.% և ավելի նավթ կամ նավթամթերք, որոնք ստացված են բիտումային հանքատեսակից</p>	
3404-ից	<p>Արհեստական և պատրաստի մոմեր՝ պարաֆինի, նավթե մոմերի կամ բիտումավոր տեսակի կամ պարաֆինի մնացորդների հիմքով</p>	<p>Ջտման և/կամ մեկ կամ մի քանի որոշակի մշակման գործողություններ: Այլ գործողություններ, որոնց ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը</p>
35 խմբից	<p>Սպիտակուցային նյութեր,</p>	<p>Պատրաստում ցանկացած</p>

	մոդիֆիկացված օսլա, սոսինձ, ֆերմենտներ, բացի 3505 10 5000; 3505 10 900, 3507-ից դիրքերի արտադրանքից, որոնց համար ընդունելի կանոնները ներկայացված են այնուհետ	դիրքի նյութերից՝ որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 20 %-ը
3505 10 500	Օսլաներ՝ վերածված բարդ կամ պարզ եթերի	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից՝ այդ թվում 3505 ապրանքային դիրքի այլ նյութերից
3505 10 900	Այլ մոդիֆիկացված օսլաներ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից, բացառությամբ՝ 1108 ապրանքային դիրքի նյութերից
3507-ից	Ֆերմենտային պատրաստուկներ՝ այլ տեղերում չնշված կամ չներառված	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը չպետք է գերազանցեն վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
36 խումբ	Պայթուցիկ նյութեր, հրատեխնիկական արտադրանք, լուցկի, հրակիր համահավվածք,	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից, որի ժամանակ բոլոր

	այլ վառվող նյութեր	օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 20 %-ը
37 խմբից	Լուսանկարչական և կինոապրանքներ, բացառությամբ՝ 3701, 3702, 370400 դիրքերի ապրանքներից, որոնց համար ընդունելի կանոնները ներկայացված են այնուհետ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից՝ որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 20 %-ը
3701	Լուսանկարչական հարթ ժապավեն և թիթեղներ՝ զգայունացված, չլուսակայված, ցանկացած նյութից, բացառությամբ՝ թղթից, ստվարաթղթից կամ տեքստիլից, հարթ ժապավեն վայրկենական	Պատրաստում, որի ժամանակ օգտագործված բոլոր նյութերը պետք է դասակարգվեն 3701 և 3702 դիրքերից տարբեր դիրքերում

	նկարահանման համար, զգայունացված, չլուսակայված, փաթեթավորված կամ առանց փաթեթավորման	
3702	Լուսանկարչական ժապավեն գլանափաթեթով՝ զգայունացված, չլուսակայված, ցանկացած նյութից, բացառությամբ՝ թղթից, ստվարաթղթից կամ տեքստիլից, հարթ ժապավեն վայրկենական նկարահանման համար՝ գլանափաթեթով, զգայունացված, չլուսակայված	Պատրաստում, որի ժամանակ օգտագործված բոլոր նյութերը պետք է դասակարգվեն 3701 և 3702 դիրքերից տարբեր դիրքերում
3704 00	Նկարչական սկավառակներ, ժապավեն, թուղթ, ստվարաթուղթ և տեքստիլից նյութեր՝ լուսակայված, բայց չերևակայած	Պատրաստում, որի ժամանակ օգտագործված բոլոր նյութերը պետք է դասակարգվեն 3701-3704 00 դիրքերից տարբեր դիրքերում
38 խմբից	Այլ քիմիական արտադրանք, բացառությամբ՝ 3801 20 100, 3801 30 000, 3803 00-ից, 3805-ից, 3806-ից, 3806 30 000, 3807 00-ից, 3811 21 000, 382370000, 3824-ից ապրանքային դիրքերից, որոնց համար ընդունելի կանոնները ներկայացված են այնուհետ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ դրանց արժեքը չգերազանցի

		վերջնական արտադրանքի գնի 20 %-ը
3801 20 100	Կոլոիդային գրաֆիտ յուղի մեջ կախույթի տեսքով, կիսակոլոիդային գրաֆիտ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը չպետք է գերազանցեն վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
3801 30 000	Ածխածնային մածուկ էլեկտրոդների համար և համանման մածուկներ վառարանների աղյուսապատման համար	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից, որի ժամանակ 3403 դիրքից օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
3803 00-ից	Յուղ թալիումե, գտված	Չմաքրված յուղի գտում
3805-ից	Սուլֆատային բևեկնայուղ, մաքրված	Չմաքրված սուլֆատային բևեկնայուղի մաքրում գտման և թորման միջոցով
3806-ից	Խեժաթթվի բարդ եթերներ	Պատրաստում խեժ պարունակող թթուներից
3806 30 000	Բարդեթերային խեժ	Պատրաստում խեժ պարունակող թթուներից
380700-ից	Սև ձյութ/կուպր կամ խեժ բուսական հանքածյութից/	Փայտածյութի թորում
3811 21 000	Չողածողեր քսուկային յուղերի, որոնք պարունակում են նավթ կամ նավթամթերք՝ ստացված բիտումային տեսակից	Պատրաստում, որի ժամանակ 3811 դիրքից օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական

		արտադրանքի գնի 50 %-ը
3823 70 000	Արդյունաբերական ճարպային սպիրտներ	Պատրաստում բոլոր դիրքերի նյութերից, այդ թվում՝ ճարպային թթուներից
3824-ից	Քիմիական արդյունաբերության տարբեր արտադրանքներ. - պատրաստի կապակցող նյութեր՝ ձուլակաղապարների կամ ձուլման կաղապարածողերի արտադրության համար՝ բնական խեժի հիման վրա, - նավթենաթթուներ և դրանց աղեր, ջրում չլուծվող և դրանց բարդ եթերներ, - սորբիտ, բացառությամբ՝ 2905 44 ենթադիրքի սորբիտից, - նավթային սուլֆոնատներ, բացառությամբ՝ ալկալիական մետաղների սուլֆոնատներից, ամոնիումից և էթանոլամիմից, յուղի թիոֆենային սուլֆաթթուներ՝ ստացված բիտումինի տեսակից և դրանց աղերը, - իոնիտներ, - կլանող բաղադրություն էլեկտրոնային լամպերի կամ էլեկտրական փականների վակոււմը ավարտելու համար, - ալկալացված երկաթի օքսիդներ գազի մաքրման համար,	Պատրաստում, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերը պետք է դասակարգվեն արտադրանքի դիրքից տարբեր դիրքում: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ նրանց արժեքը չգերազանգի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը

	- վճիտացված գազի մաքրման արդյունքում ստացած ամոնիակային ջուր,	
	- սուլֆոնավթային թթուներ և դրանց աղեր, ջրում չլուծվող և դրանց բարդ եթերներ - հացօղու յուղեր և Ջեպելի յուղ /ոսկրային/ - տարբեր անիոններով աղերի խառնուրդներ - ժելատինե հիմքի վրա պատճենահան մածուկներ, այդ թվում՝ տեքստիլ նյութերից կամ թղթից տակդիրների վրա	
3901-3915-ից՝	Նախնական տեսքի պոլիմերներ, պլաստմասսայի կտորտանք, մնացորդ և մնացուկ. - - պոլիմիացման ապրանքներ	Պատրաստում, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 % -ը: Սակայն 39 խմբից օգտագործվող բոլոր նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջ-նական արտադրանքի 20 %-ը
3916-3919	Պլաստմասսայե կիսաֆաբրիկատներ կամ պատրաստվածքներ - հարթ պատրաստվածքներ՝ վերամշակված մակերեսայինից այլ կերպ, կամ ուղղանկյունից կամ քառակուսուց այլ կերպ	Պատրաստում, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը: Սակայն 39 խմբից

	ձևված - կիսաֆաբրիկատներ վերամշակված մակերեսայինից այլ կերպ	օգտագործվող բոլոր նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի 20 %-ը
3920 10 270-ից	Ժապավեն և գծեր կամ շերտեր 0,125մմ-ից ոչ ավելի հաստությամբ՝ 0,94-ից պակաս տեսակարար կշռով պոլիէթիլենից՝ տպագրված նկարով կամ տեքստով՝ գլանափաթեթներով	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ նրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
3920 10 280-ից	Ժապավեն և գծեր կամ շերտեր 0,125մմ-ից ոչ ավելի հաստությամբ՝ 0,94 և ավելի տեսակարար կշռով պոլիէթիլենից՝ տպագրված նկարով կամ տեքստով՝ գլանափաթեթներով	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից: Սակայն, արտադրանքի հետ միևնույն ապրանքային դիրքի նյութերը կարող են օգտագործվել պայմանով, որ նրանց արժեքը չգերազանցի վերջնական արտադրանքի գնի 50 %-ը
3920 10 890	Սալիկներ, թերթեր, թաղանթ և շերտեր կամ ժապավեններ այլ, էթիլենի պոլիմերներից 0,125մմ ավելի հաստությամբ, ոչ ծակոտկեն և չամրանավորված, ոչ շերտավոր, առանց հիմնաշերտի և համանման եղանակով չմիացված այլ նյութերի հետ	Պատրաստում ցանկացած դիրքի նյութերից: Սակայն 39 խմբի «պոլիմերային նյութեր, պլաստմասսաներ և դրանցից արտադրատեսակներ» նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը
3926	Պլաստմասսայե այլ իրեր և 3901-	Պատրաստում, որի

	3914 ապրանքային դիրքերի այլ նյութերից արտադրատեսակներ	ժամանակ բոլոր օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը
4001	Բնական կաուչուկ, բալատա, գուտապերչ, գվայուլա, չիկլ և համանման բնական խեժեր՝ սկզբնական ձևերով կամ թիթեղների, թերթերի կամ շերտերի, կամ ժապավենների տեսքով	Բնական կաուչուկի շերտերի շերտավորում
4005	Չվուլկանացված ռետինային խառնուրդ՝ սկզբնական ձևերով կամ թիթեղների, թերթերի կամ շերտերի կամ ժապավենների տեսքով	Պատրաստում, որի ժամանակ բոլոր օգտագործվող նյութերի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը
4012	Օդաճնշական ռետինե անվադողեր և դողածածկաններ՝ վերականգնված կամ օգտագործված, անվադողեր և դողածածկաններ զանգվածային կամ օդաճնշական, անվադողերի պաշտպանամետաղ և շրջանաձև ժապավեններ, ռետինե, բացառությամբ՝ 4012 11 000 – 4012 19 000 ենթադիրքերի ապրանքներից, որոնց համար ընդունելի կանոնները ներկայացված են այնուհետ	Պատրաստում, որի ժամանակ պատրաստի արտադրանքի դիրքը ունեցող օգտագործվող հումքի արժեքը չպետք է գերազանցի վերջնական արտադրանքի գնի 50%-ը

4012 11 000- 4012 19 000	Անվադողեր և դողածածկաններ վերականգնված	Օգտագործված անվադողերի վերականգնում
4017 00	Կոշտ ռետին (օրինակ էբոնիտ) բոլոր տեսքերով՝ ներառած թափոններ և մնացորդներ, կոշտ ռետինից պատրաստված արտադրատեսակներ	Պատրաստում կոշտ ռետինից
4101-4103- ից	Առանց բրդային ծածկույթի կամ մազածածկույթի տարբեր կենդանիների չմշակված մորթիներ, բացառությամբ՝ այս խմբի 1Ծ) կամ 1Ե) կետերով բացառված	Կենդանիների մորթիների վերամշակում մազածածկույթի վերացման միջոցով
4104-4106	Առանց բրդային ծածկույթի կամ մազածածկույթի տարբեր կենդանիների դաբաղած կաշի կամ կաշվե կրաստ՝ երկտակված կամ չերկտակված, բայց առանց հետագա մշակման	Կաշվի պատրաստում՝ անդարձելի դաբաղում անցած կենդանիների մորթիներից
